# ՍԻՈՆ

## ԱՄՍԱԳԻՐ

## ԿՐՕՆԱԿԱՆ–ԳՐԱԿԱՆ–ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԺԵ. ՏԱՐԻ 1941

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

digitised by A.R.A.R.@

# ՍԻՈՆ

ԺԵ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1941 — ՅՈՒՆԻՍ — ԹԻՒ 6

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

## ԱՊԱԳԱՅ ԿԱՐԳԸ

*Նախորդ խմբագրականով խօսեցանք ընդհանուր այն տագնապի մասին, որմէ կը տառապի մեր օրերուն մարդկութիւնը· և որուն բուն պատճառը նահանջն էր էական արժէքներու։ Անոնք որ կը հետևին պատմութեան, գիտեն թէ մարդկային քաղաքակրթութեան վերջին հարիւրամեակը շատ բան փոխեց միտքերու մէջ, թէ ժամանակէ մը ի վեր պատմութեան կաթսան կ'եռար ի վնաս քրիստոնէական արժէքներու, և թէ հոգեկան արժէքները վտանգի մէջ էին։ Գիտական, գեղարուեստական եւ տնտեսական յառաջդիմութիւնները ծնունդ տուած էին նոր ըմբռնումներու՝ անջատելով մարդկութիւնը իր հոգեւոր կեդրոնէն՝ Աստուծմէ։ Անշուշտ թէ վերոյիշեալ շարժումները ընթացք առած չէին այսօրուան արդիւնքին յանգելու համար· անոնցմէ իւրաքանչիւրը ունեցած պէտք է ըլլայ բարձրագոյն ճշմարտութեան իր վայրկեանը, սակայն ընթացան ողբերգականօրէն բացասական գետնի մը վրայ, խորտակելով շատ յոյսեր ներկայ մարդկութեան, զորս ան սնոյց սկսող դարու նախօրեակին։*

*Այս վիճակները սակայն խորագոյն կերպով զգալ կուտան լուսաւոր ապագայի մը կերտման անհրաժեշտութիւնը։ Դժուար է անշուշտ ճշգրտօրէն մատնանշել այժմէն իրենց մանրամասնութեանցը մէջ ապագայ այդ կարգը յօրինող տարրերը, բայց կարելի է այժմէն մակաբերել թէ անոր մէջ պէտք է իրենց արժանի տեղը գրաւեն այն արժէքները որոնք նահանջի մէջ են։*

*Նախորդ խմբագրականին մէջ կ'ըսէինք թէ արդի քաղաքակրթութեան մէջ անհատը փոխարինուած է զանգուածով, թէ մեծ պատերազմէն ի վեր մանաւանդ, պատմութեան բեմը կը գրաւեն շարժման մէջ եղող հաւաքականութիւնները։ Զանգուածները անշուշտ նոր չէ որ դեր մը կը կատարեն պատմութեան մէջ· մարդը միշտ տիրապետուած է բազմութիւններէն, տաղանդը՝ միջակէն, որակը՝ քանակէն, սակայն զանգուածը բնաւ չէր խաղցած այն մեծ դերը որքան մեր օրերուն։ Լաւ կազմակերպուած բազմութիւններ կը ճգնին միութեան մը մէջ գալ, վաւերացնելու համար իրենց տիրապետութիւնը։ Կա-*

digitised by A.R.A.R.@

րելի չէ այլեւ անհատաբար ապրիլ և մտածել։ Մշակոյթը կը ծառայէ զանգուածին. այս կը նշանակէ վերջ անհատականութեան։

Յետոյ՝ տնտեսական ազդակները ստեղծեցին տնտեսական խորհողութիւն մը. «զհաց մեր հանապազորդ»ը միակ խնդրանքն է մեր օրերու մարդկութեան, և մարդը կը տառապի անձև և անդիմագիծ ույժէ մը՝ դրամէն։ Իսկ այդ անձև ույժին իբր խարիսխ կը ծառայէ արդի թէքնիքը, մեր ժամանակի հրաշքը. և մարդը գերին եղած է իր ստեղծագործութեան՝ մեքենային։ Այս կերպով երեսուած տնտեսական կեանքը բոլորովին կը բաժնուէր մտաւոր կեանքէն։ Իսկ ուրոյն հասկացողութեամբ ի յայտ եկած ցեղային և ազգային բնազդները տարօրինակ ձևեր հագան ի հեճուկս քրիստոնէութեան, որ խտիր չի դներ ցեղի, գոյնի եւ դասակարգի միջև։ Ազգայնականութիւն և ընկերվարութիւն, մին՝ մշակոյթի, և միւսը թէքնիքի ծնունդ, երկու հակընդդէմ ույժեր են ներկայ աշխարհին, պայքարի մտած իրարու հետ։ Իրարու հակադրուած են նաև միտքն ու բնութիւնը, ազատութիւնն ու պէտքը, անհատն ու ընկերութիւնը։

Ներկայ այս քաոսը կը շեշտէ անհրաժեշտ պէտքը ապագայ կարգին. բան մը պէտք է փոխուի, և այս անհրաժեշտութիւնը՝ իր ծայրակէտին հասած այս օրերուս, կարելի է բարիք մը նկատել, վասնզի որքան որ ուժգին ըլլայ տառապանքը հիւանդին, այնքան կը զօրանայ իր մէջ առողջանալու ըղձանքը։ Նոր աշխարհին մէջ պէտք է իրենց վայել տեղը գտնեն այն բոլորը որոնք նահանջի մղուած են ժամանակէ մը ի վեր։

Ամբողջ աշխարհը կը թնդայ շառաչիւնովը կործանուող փլատակներուն. ամենուրեք թոհ ու բոհ, մրրկում առանց յոյսի. մարդիկ դժնդակ գինովութեան մէջ, ինքզինքնին կը սպառեն, իրենց եղբայրներուն վնասելու մարմաջէն բռնուած։ Բոլոր հաւատքները կործանած՝ կը մեռնին. այժմու միակ սկզբունքը ույժն է, որ իբր խորհրդանշան ունի սուրը, և իբր մեհեան՝ զօրանոցը։ Իզուր քաղաքագէտներ, տնտեսագէտներ և բարոյագէտներ կը բազմապատկեն իրենց խորհրդակցութիւնները, և դարմաններ կ՚առաջարկեն. անոնց բոլոր ըրածը ժամանակաւոր և խաբուսիկ է, և մահամերձին տառապանքները երկարաձգելու փորձեր միայն։ Մեծ պատերազմէն ի վեր քիչ անգամ մտածուեցաւ թէ ուրկէ՞ կ՚ածանցէին մեր օրերու տառապանքը շինող այս չարիքները՝ որոնք մէկտեղուելով ստեղծեցին մեր դժնդակ ներկան, և տխրատեսիլ ապագան։

Խաղաղութիւն ու յառաջդիմութիւն, որոնց անուններով կ՚երդնուն նոր օրերու մարգարէները, իրապէս և տեւականօրէն այն ատեն միայն կրնան իրականանալ, երբ հոգիներու մէջ ծագի Աւետարանի լոյսը և Քրիստոսի խաղաղութիւնը։ Խորունկ իրականութիւններ՝ որոնցմէ կը պարպուին տակաւ անձնակեդրոն ու մամոնա կապած հոգիները մարդոց, նահանջի մղելով այս կերպ էական արժէքները, առանց որոնց՝ նուաբեկութեան սահմանուած է մարդուն լաւագոյն կէսը՝ հոգին։

Բան մը պէտք է փոխուի, աւելի ճիշդ, փոխուածները իրենց գերին պարտին դառնալ էն առաջ ապագայ կարգին մէջ, կարելիութեան ճամբուն մէջ դնելու համար լաւագոյն յոյսերը մարդկութեան։

ԽՄԲ.

## ԿՐՕՆԱԿԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ(*)

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
ի Հայաստան աշխարհի:»

*Այսպէս կը պատմէր մեր հաւատքին հայրը՝ Լուսաւորիչ, Արշակունիներու կ՚ն հզօր և բաղդաւոր թագաւորին՝ Տրդատի, ու այդպէս հաւատաց ու կը հաւատայ դարերէ ի վեր Հայ հոգին, Լուսաւորչի այդ խօսքին թէ՝ «Եկէ՛ք, ով բարեպաշտ թագաւոր և Հայ ժողովուրդ, շինենք լուսեղէն խորանը ուր Հայաստանի համար ծագեցաւ փրկութեան լոյսը», որով Միածինը՝ մեր պատմութեան համար յաւէտ անմոռանալի և մեր ազգային խղճմտանքի համար իսկապէս երջանիկ ու բախտորոշ թըւականի մը սկիզբը, իջաւ երկինքէն ի Հայաստան աշխարհ, և խորտակելով հեթանոս ցնորքներու մէջ թանձրացած հին հաւատքը, յեղաշրջեց մեր կրօնական կեանքը, մեր ազգային գոյութեան համար սահմանելով նոր ու ամուր կռուաններ, առաջնորդելու համար մեզ դէպի աւելի մաքուր և լուսաւոր հորիզոններ։ «Ժողովուրդ որ նըստէր ի խաւարի ետես լոյս մեծ»։*

*Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա ի Հայաստան աշխարհի. Աստուած Հայաստան իջաւ Դ. դարուն սկիզբը. ի՞նչ ընելու. «Հայոց արի՛ւն հոսանելու». քրիստոնէութեան լոյսը իջեր էր երեք դարեր առաջ Հայ հոգիին, Հայ մտածումին մէջ, ու տակաւին երէկ՝ Հռիփսիմեանց չքնաղագեղ կոյսերու երկնասարդ արիւնը թափուեր էր ի Հայաստան աշխարհի, պարարտացնելու, կենսաւորելու, ծերացած հեթանոս հայ հոգին. Աստուած իջեր ի Հայաստան, հայոց կոյսերուն արիւնը հոսանելու։ Առաջին ու վերջին անգամ չէր որ հայ արիւնը կը թափուէր այնքան առատօրէն երկինքի փառքին ու Քրիստոսի սիրոյն համար. այս Եկեղեցին, դարերէ ի վեր իր զաւակներու արիւնին ու ոսկորներուն վրայ հիմնուած է. Հայ Եկեղեցւոյ պատերը դարերով իր զաւակներուն արիւնով շաղուեցան ու ամրացան։*

*Էջ Միածինն և լոյս փառաց ընդ նմա ի Հայաստան աշխարհի. ո՛չ միայն Աստուած Հայաստան իջաւ՝ ըստ Լուսաւորչի տեսիլքին, հայոց արիւնը հոսանելու, այլ այդ արեան, այդ կարմիր բոցին մէջ հիմը դընելու Հայաստանեայց Եկեղեցւոյ։*

*Էջմիածի՛ն, ի՛նչ սրտագրաւ և բանաստեղծական անուն. Աստուած Հայաստան է իջեր, ու Անոր համար յարմար տուն մը, տաճար մը պիտի շինէ Հայ ժողովուրդը, Արարատի դիմաց, Այրարատեան դաշտի սրտին, Հայ սրտին վրայ. լա՜յն ու ընդարձա՞կ՝ բաւելու համար Աստուծոյ ու բոլոր ժամանակներու հայ սերունդներուն. տաճար մը պիտի շինեն Աստուծոյ, որուն համար Տրդատ քարեր պիտի բերէ Արարատի կողմէն, թագուհին ու իշխանուհիներ հողեր պիտի բերեն իրենց փէշերով, ու համայնական աշխատանքով պիտի կանգնի Եկեղեցին, ուր Լուսաւորիչ Տըրդատին հետ պիտի աղօթէ. տաճար մը՝ որուն մէջ յետոյ Ս. Մեսրոպ նոյն Աստուծոյ շրթունքէն պիտի խլէ Հայ Այբուբենքը, իբր նոր հայ Պրոմեթէոս, բերելու համար զայն հայ ժողովուրդին. տաճար մը՝ ուր Ս. Սահակ պիտի հսկէ մեր շիջող քաղաքական փառքերուն վրայ. տաճար մը՝ ուր Նարեկացին պիտի աղօթէ ու պատմէ Աստուծոյ, Հայ Աստուծոյ մը միայն պատմուելիք հայ տաճարի մը մէջ, մեր ծով ցաւերէն ու անքան յուսահատութիւններէն. տաճար մը՝ ուր Շնորհալին պիտի երգէ. «Սէր անուն Յիսուս... Տենչալւոյդ տեսլեամբ տուր ինձ յագենալ». տաճար մը՝ ուր հայ ստեղծագործ միտքը պիտի քրտնի, եռայ, ստեղծագործէ. տաճար մը՝ ուր մեր աստուածաբան և իմաստասէր վարդապետները, մագաղաթներու դէզերով պաշարանեն այս Եկեղեցին, անոր անկախութիւնը, հուսկ ուրեմն հաշտելու համար. «Մեք հաւան եմք ընդ հարս մեր ի դժոխս իջանել և ոչ ընդ հռոմոց յերկինս ելանել». տաճար մը՝ ուր մեր պապերը պիտի հաւաքուին դարերով, խորանին առջև աղօթելու, յուսալու, հաւատալու, սիրելու, կռուելու ու հուսկ ուրեմն անոր մէջ թաղուելու....։*

(*) Քարոզ՝ խօսուած Տօն Կաթուղիկէին՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

digitised by A.R.A.R.@

Անհաւասարի՛կ Աստուծոյ և հայ հաւատքի համար այսպիսի տաճար մը կառոյց հայ ժողովուրդը, «հանելով զայն հողէն՝ քար առ քար, և իջեցնելով զայն երկինքէն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ», և որուն հիմերը եղան Հայաստանի լեռները, որոնց վրայ սիւներ նետուեցան, կամարները զիրար գրկելէն բարձրացան մինչև երկինք, իր մէջ առնելու համար երկինքն ամբողջ իր աստղերով, ու խորհուրդով ու Աստուծով։

Երկինքը Հայ է այնքան, մեր պապերու հաւատքին՝ մէջ, որքան հողը, մայրենի հողը՝ Հայաստան աշխարհը։

Այսպէս շինուեցաւ, բարձրացաւ Հայ հոգիին ու Հայ հողին վրայ Էջմիածի՛նը...

Բայց Աստուծոյ մը համար շինուած տունը որո՞ւ խնամքին ու պաշտպանութեան յանձնել։ Ու Լուսաւորիչ իջաւ ծունկի՝ առաջին Եկեղեցիին մէջ առաջին աղօթքը ընելու լոյսի խորանին առջև. ու Աստուած՝ ըստ աւանդութեան, անոր աղօթքին ի պատասխան Արագածի կատարին կանթեղ մը կախեց «Լուսաւորչի Կանթեղ» անունով, ի պաշտպանութիւն նորակառոյց այդ Եկեղեցիին։ Ո՞վ կը տեսնէ այդ կանթեղը.—

Ով անմեղ է, լիքը՝ սիրով
Ու հաւատով անսասան,
Ով նայում է վա՛ռ յոյսերով
Դէպի Հայոց ապագան,

Նա՛ կը տեսնի էն մեծավառ
Ջահը կախուած երկնքից,
Ասես Աստծոյ աչքը պայծառ
Հսկում էր ցած երկնքից:

Ի՜նչ խո՛ր ու ի՜նչ անուշ հաւատք. Հայ Եկեղեցւոյ հիմնարկութիւնն ու պաշտպանութիւնը, Հայ կրօնազգած հաւատքը, միայն և միայն Աստուծո՛յ կրնայ վստահիլ որպէսզի «Դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն»։

Հայաստանեա՛յց Եկեղեցի. բայց գիտէ՞ք ու կը ճանչնա՞ք զայն. ի՞նչ է ան. ան կը մարմնացնէ ամէն բանէ առաջ և վեր Հայաստանեայց ոգին: Հայութեան խղճմըտանքն է ան ու այս ժողովուրդին արժանապատուութիւնը. մեր փառքն ու հպարտութիւնը, հրաշակերտ արտայայտութիւնը մեր տոհմային հանճարին, չքեղ տունկն ու ծաղիկը Հայ քաղաքակրթութեան. մեր առաջին ապուէնն ու ապաստանարանը, մեր վերջին բերդն ու ամրոցը։

Հայաստանեա՛յց Եկեղեցի. մեր ցեղին արթուն նայուածքը. մեր ցեղին իմացական ձգտումներուն վառարանը, մեր վիշտերուն, մեր իղձերուն, մեր յոյսերուն կենդանի վկայարանը, մեր ազգային իտէալներուն անբիծ ներշնչարանը, մեր լեզուին, մեր պատմութեան, Հայ արուեստին, Հայ երգին, Հայ ինքնօրէն քաղաքակրթութեան անկորնչելի յիշատակարանը։

Հայաստանեա՛յց Եկեղեցի. ի՞նչ կը բերենք անցեալէն իբրև ժառանգութիւն, և իբրև սրբազան աւանդ՝ յանձնելու գալիք սերունդներու գուրգուրանքին։ Մարտական փայլուն նուաճումներու և աշխարհակալութեանց յաղթանակնե՞ր, արուեստի, գպրութեան, գիտութեան հոյակապ ու անկորնչելի արժէքնե՞ր. ոչ մին և ոչ միւսը. բայց անոնցմէ վեր ու զանոնք վերանցող ոգեկանութիւն մը՝ Եկեղեցի՛ն Հայաստանեայց։

Ուրեմն անոր հիմնարկութեան պատմական տարեդարձին սա առիթով, երբ հաւաքուած ենք անոր խորհուրդին շուրջ, անգամ մը ևս իրականացնենք սրբազան շարականին սրտառուչ թելադրութիւնը. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ...»։

Բայց, միւս կողմէ դառն յիշատակներ ու մտածումներ կը ծուատեն զգացումս ու հոգիս, երբ կը խորհիմ թէ 17 դարերէ ի վեր այս ժողովուրդը կը շինէ իր Աստուծոյն համար տաճար մը, և ուրիշներ կը քանդեն զայն այնքան վայրագ անբարեխղճութեամբ մը։ Ու թոյլ պիտի տամ ինքզինքիս, յայտարարելու սա սրբազան բեմէն՝ վիրաւոր սրտով ու դառնութեամբ ու արդար արտմութեամբ թէ, շատ հինէն ի վեր, դժբախտաբար, Հայ Եկեղեցւոյ առաջին ու աննահանջ թշնամիները եղած են քրիստոնեայ Եկեղեցիները, մարդորսորդական շիլ ու գռեհիկ նկատումներէ առաջնորդուած, որոնք թոյլ տուած են իրենք իրենց դիմելու ամէն միջոցի, մարելու համար կայծ առ կայծ «Լուսաւորչի անմար կանթեղը», պատռուածքներ ստեղծելով այդպէս Հայ հոգիէն, Հայ Եկեղեցիէն,

digitised by A.R.A.R.@

Հայ սրտերէն ներս, բաժանումի անբուժելի թունաւորումով։ Ինծի համար անըմբռնելի տարազ մըն է Հայ–Կաթոլիկ, Հայ–Բողոքական բացատրութիւնը։ Ե՞րբ տեսաք, ե՞րբ ճանչցաք Հայ Եկեղեցւոյ վարդապետական ու ծիսական սխալները, ու ընդգրկեցիք ճշմարտութիւնը! Լինալով բողոքականութեան կամ կաթոլիկութեան ծոցը. ու ի՞նչ խղճմտանքով, ի՞նչ սրտով, այս Եկեղեցիէն զողցած ձեր լոյսերով, ձեր հոգիներով կ'երթաք լուսազարդելու համար օտար խորաններ, ու զարդերն ըլլալու օտար Եկեղեցիներու. մէկ չէ՞ ընդհանրական Եկեղեցին, մէկ չէ՞ Աւետարանը, Քրիստոսը, ճշմարտութիւնը. ի՞նչպէս առանց խղճահարութեան ոտքի տակ կ'առնէք մեր ազգային արժանապատուութիւնը, ուրանալով, ուծանալով, օտարանալով Հայ աւանդութիւններէ, Հայ հոգիէ, մեր նախնիքներու սրբազան հաւատքէն։ Ի՞նչպէս պիտի գնահատէք օտար Եկեղեցիներու խորդ մայրութիւնը, երբ հարազատ որդիութիւն չկրցաք ընել ձեր մայրենի Եկեղեցիին, որ ծնաւ ձեզ ազգովին, ոգեկանապէս, իմացապէս, բարոյապէս, հաւաքական–կրօնական կեանքով մը՝ իր ծոցէն, իր աւազանէն, ու սնուց, մեծցուց ձեզ իր մայրենի անխարդախ կաթով. ինչպէ՞ս կը մոռնաք այս ամէնքը, ու կը փրթիք Հայ Եկեղեցւոյ ամբողջականութենէն, հետախաղաղ կորսուելու Հայ ժողովուրդին համար։

Նախնեաց շաւիղէն խոտորիլը այլասերիլ է, կորսնցնել է հոգիին հարազատութիւնը, ենթարկուիլ է այնպիսի վիճակի մը, ուր ոչ միայն կ'աղճատի կրօնական խղճմտանքը այլ նաև կ'աղօտանայ ազգային ինքնութեան զգացումը։

Կրօնք և Հայրենիք, Ազգ ու Եկեղեցի, երկու անբաժան կենսունակութիւններ են մեզի համար, Հայ կեանքին երկու երեսները. կրօնքը ազգայնական, ու ազգայնականութիւնը կրօնական զօրութիւններ են եղած մեզի համար անցեալի մէջ, ու են այժմ։ Շեղիլ մէկէն կամ միւսէն, կ'առաջնորդէ մեզ դէպի քայքայում ու անկում։ Ո՞ւր են այժմ Միջին դարուն Եւրոպայի մէջ կազմուած բազմահազար մեր հայ գաղութները. ի՞նչպէս հետախաղաղ կորսուեցան. — որովհետև հեռացան մայրենի Եկեղեցիէն, ու անխուսափելիօրէն՝ իբր անոր հետևանք, ապազգայնացումի ճամբան բռնեցին։

Ազգ և Եկեղեցի. երկուքն ալ պէտք է ապրին՝ իրարու համար, իրարմով. առոր մէջ է միայն Հայութեան ճշմարիտ ու իրական շահը։ Ու երանի այն ազգին որ կը հաւատայ պաշտպանութեանը այն Աստուծոյն որ իր նախնիքներուն ապաւէնն ու յոյսն է եղած. արդարև երջանիկ է այն ազգը որ անշեղ կ'ընթանայ իր նախնիքներու շաւիղէն, չբաժնելով իր մտատիպարը իր պապերու պաշտած խորանէն, իր հայրերու Աստուծմէն։

Այդպէ՞ս ենք արդարև մենք, իբրև սերունդներն ու յաջորդները փառաւոր նախնիքներու։ — Այս Եկեղեցիին ոչ նուազ վտանգաւոր թշնամիներն են նաև մեր անտարբերութիւնն ու անհոգութիւնը։ Նահանջի մէջ է այսօր Հայ ոգին. նահանջ ամէն բանի մէջ։ Կը փրթինք մեր անցեալէն, մեր արժէքներէն, մեր պապերէն, մեր Եկեղեցիէն։ Ինչո՞ւ, գէթ այսօր, Եկեղեցւոյ սա տօնին առթիւ չյորդեր սա Եկեղեցին իր զաւակներով. կը խորհի՞ք թէ մեռե՞ր է Հայ Եկեղեցին. եթէ այդպէս է, գէթ ձեր զաւակները եկեղեցի բերէիք այսօր անոր գերեզմանին վրայ լալու համար միայն. բայց ո՛չ, աստուածակառոյց այս Եկեղեցւոյ հիմերը դժոխքն անգամ չի կրնար սասնել. վեր է մարդոց որդիներու ուժէն ու բազուկէն, Եկեղեցին քանդելու դժբախտութիւնը։ Բայց քանդելու մէջ արժանիք մը չկայ. այլ շինելու, պահելու, արժևորելու մէջ։ Ուրեմն եկէք նորէն վերաշինենք քանդուածը, միասին, դարձնելու համար զայն՝ Հայաստանեայց Եկեղեցին, տապանակը մեր հաւատքին ու գոյութեան, գալիք բոլոր դժբախտութիւններուն ու ջրհեղեղներուն դիմաց։ Եկեղեցւոյ շէն ու պայծառ շրջանները չեն եղած խաղաղութեան դարերը, այլ այն ժամանակաշրջանները, ուր հալածանքն ու կոտորածը տասանորդած են Եկեղեցւոյ հաւատացեալներու բազմութիւնը. այժմ մեր Եկեղեցին ևս, դէպքերու տխուր դասաւորումով մը կ'անցընէ բաբելոնեան գերութեան իր դժնդակ օրերը. տակաւին Էջմիածնի վրայէն չէ վերցուած սուգի շղարշը։ Բայց կանգուն է Էջմիածինը իւրաքանչիւր հայու հոգիին մէջ, իր հիմերով, իր սիւ-

digitised by A.R.A.R.@

ներով, իր կաթողիկէներով։ Էջմիածինը չէնք մը չէ լոկ, ոգեկան հայրենիք մըն է ան, ու հայրենիքները երկիրներով չեն սահմանափակուիր։ Բաւ է միայն, Եկեղեցւոյ գերութեան սա օրերուն, ամէն օր մեր աղօթքներուն մէջ յիշել Էջմիածինը ու ըսել, ինչպէս հրեայք Բաբելոնի գերութեան ժամանակ կ'ըսէին Երուսաղէմի համար. Էջմիածի՜ն, Էջմիածի՜ն, եթէ քեզ մոռնանք թող մեր բերնին մէջ ծամուող հացը քա՛ր դառնայ մեր ստամոքսին մէջ. «Եթէ մոռացայց քեզ Էջմիածի՜ն, մոռասցի գիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմս իմ»։

Ու մինչ կը խորհրդածենք Էջմիածնի հիմնարկութեան տարեդարձի առթիւ, մըտածումս ետ կ'երթայ տասնեակ տարիներ առաջ, մեր հայրենի հողին, մեր գաւառներու վրայ ծաղկող հազար ու մէկ չէն վանքերու ու եկեղեցիներու վրայ, որոնց մէջ հաւատքի կանթեղը դարերով վառ ու պայծառ մնաց՝ այս ժողովուրդի խղճմըտանքին պէս, մինչ այժմ անոնց երբեմնի լուսազարդ խորաններու աւերակներուն վրայ օձերը ձագ կը հանեն ու բուերը կը վայեն. հազարներէն մին սակայն միայն կանգուն է այժմ, իբր լուռ վկայարանը մեր հին վանքերու ոսկեդարէն, Ս. Յակոբեանց սա տաճարը, ըլլալու համար Սիւնեաց Նոր անապատը, Նոր Տաթեւը, իր խոհեմազարդ գահակալով, իր ազգանուէր ու եկեղեցանուէր Միաբանութեամբ, և իր հաւատացեալներով։

Ուրեմն եկէք, կենդանի ու պայծառ պահենք այս Եկեղեցին, ու անոր լուսազարդ խորանը. ուրեմն եկէք վերաշինենք մեր փրկութեան նաւը պատրաստելով զայն գալիք ջրհեղեղներուն, ու աղօթենք Աստուծոյ՝ սրտեռանդն.

Թագաւոր երկնաւոր զԵկեղեցիս Հայաստանեայց անշարժ պահեա . . . ամէն։

ԱՐԹՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

# ՔՐԻՍՏՈՍԻ ԹՈՒՂԹԸ

«Յայտնեալ՝ զի էք թուղթ Քրիստոսի . . . . .»
(Բ. ԿՐՆԹ. Գ. 3)

Յիսուս ոչինչ գրած է։

Բացի այն օրէն՝ ուր տեսան Իր մատով գրելը գետնին վրայ խորհրդաւոր նշանագրերուն, սահմանուած՝ խռովելու խղճմըտանքը քանի մը խստապարանոց փարիսեցիներու — աւազին նման չարժուն այդ քանի մը գրերէն զատ, հուսկ ջնջուած անշուշտ անցորդներու ոտքին տակ, — Յիսուս երբեք չէ դիմած գրին, հաղորդելու մարդոց Իր զգացումներն ու մտածումները։

Մելան, մագաղաթ, գրիչ, տախտակներ! այս նիւթական առարկաները ցուրտ և աններգօր էին ըլլալու համար միջնորդ Իր և ուրիշներու հոգիին միջև. Ան, որ կ'ըսէր, «Ես եմ կեանք», ուզած է մարդոց հետ ունենալ միայն անձնական յարաբերութիւններ, և երբ Իր ձայնը անզօր մնաց, Ան ուզեց գործածել միայն կենդանի միջնորդներ։

Փոխանակ ինք կազմելու, Իր ժամանակակիցներուն կամ գալիքներուն համար գործ մը որ պարունակէր Իր մտածումին կատարեալ և վճռական արտայայտութիւնը, փոխանակ քանդակելու Իր կամքը քարէ տախտակներու վրայ նման Սինայի Աստուծոյն, Ան ընտրեց մարդկային հոգին, զայն ընելու համար աւանդապահն ու անդրուվարը Իր վարդապետութեան, ապրող սըրտերուն փոխանցելու համար կենդանի ճըշմարտութիւնը։ Ինքնավստահութեամբ մը որ կը շփոթեցնէ մեր ճղճիմ իմաստութիւնը, վեհապետական եւ ստեղծիչ վեհանձնութեամբ, Ան տուաւ Իր կեանքը, դնելու Իր ամենախորունկ գաղափարները անմշակ ուղեղին մէջ Գալիլիացի քանի մը ձկնորսներուն. այդ մութ հոգիներուն մէջ Ան շողացուց լոյսը Իր հոգիին և աշխարհ ղրկեց աստուածային խանդով բոցավառուած այս մարդերը, տանելու համար ուրիշներուն փրկութեան աւետիսը։

Անձնիւր առաքեալ «թուղթ մըն էր Յիսուս Քրիստոսի»։ Թերեւս ըսէք. «Երանի՜ առաջին դարու մարդոց. անոնք լսեցին կեն-

digitised by A.R.A.R.@

գանի արձագանգը Քրիստոսի խօսքին. Յիսուս այլեւս չի հաղորդակցիր մեզի հետ նոյն կերպով. գրուածքն է փոխարինած կենդանի թուղթը. ներշնչման բոցը մարած, ունինք մեր ձեռքերուն մէջ միայն սառած լաւան անոր։ Բայց մի՛ խաբուիք, խօսքը զոր ընտրած ենք իբրեւ բնաբան, կը վերաբերի բոլոր ժամանակներու եւ երկիրներու քրիստոնեայ սերունդներուն։ Մի միայն Յովհաննէս մը, Պետրոս մը, Պօղոս մը չեն «թուղթը Յիսուսի Քրիստոսի», այլ նաեւ Կորնթացիներն եւ ամենապարզ քրիստոնեաները։ Հեթանոս այդ միջավայրին մէջ ուր ամենէն անսանձ ապականութիւնը կ'իշխէր, Փրկիչը քարոզուած էր մեղաւոր հոգիներու, այս քրիստոնեայ հասարակութեան կողմէ, որ կը կազմէր «թուղթ մը» աւելի հրահանգիչ, աւելի պերճախօս քան որեւէ գիր որ ձեռքէ ձեռք կը շրջէր։

Եւ եթէ Կորնթացիները, որոնց բարոյական թշուառութիւններն ու հոգեկան թերացումները ծանօթ էին, արժանացան այս տիտղոսին զոր Պօղոս առաքեալ անոնց կուտայ մեր բնաբանով, մենք իրաւունք ունինք գործածելու նոյն արտայայտութիւնը, մատնանշելու համար հաւատացեալները բոլոր դարերուն։ Չունի՞նք արդեօք, մենք ալ, առանձնաշնորհը հանդիպելու ընտրեալ հոգիներու որոնք մեզի պատգամ մը բերէին Փրկչէն, եւ մենք պէտք չէ՞ որ «Յիսուսի թուղթը» ըլլանք մեզ շրջապատողներուն համար, հակառակ մեր անձնական անարժանութեան։

Այս է, եղբայրներ, ճշմարտութիւնը որուն վրայ այսօր կ'ուզէինք կեդրոնացնել ձեր ուշադրութիւնը։

I

Յիսուս — որ ոչինչ գրած է — չէ դադրած, քսան դարէ ի վեր, Իր հոգիով ներշնչուած թուղթեր ուղղելէ թերահաւատ կամ հաւատացեալ մարդկութեան։ Ոչ մէկ գործ ձգած է, բայց Իր գործը մշտատեւ է, եւ գործունէութիւնը անխափան։ Եթէ թողուց երկիրը խոյս տալու համար մարմնաւոր կեանքին նեղ սահմաններէն, իրապէս Իր հոգիով ներկայ է Ան մեր մէջ։ Ինքն իսկ չէ՞ յայտարարած. «Ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի»։

Հոս է, առաջին մեծ ճշմարտութիւնը զոր պէտք է լաւ հասկնալ խորէն ըմբռնելու համար մտածումը մեր բնաբանին։

Երբ կը խորհինք Փրկչին, զայն կը տեսնենք անցեալին մէջ, ապրած, մեծցած, յարութիւն առած Պաղեստինի հողին վրայ, եւ կամ կը մտածենք իր փառքին, նստած աստուածային մեծութեան աջ կողմը ի բարձունս, զայն հեռու կը տեսնենք մեզմէ ժամանակին եւ միջոցին մէջ, եւ չունինք կարելի տպաւորութիւնը անոր ներկայութեան։

Փառք Աստուծոյ, մենք հասկցած ենք մեծութիւնը իր երկրաւոր կեանքին, եւ առանց յուզումի չէ որ կը խորհինք Գողգոթային չարչարանքներուն. — բայց կայ միւս կողմը աւետարանին որուն հարստութիւնը կ'անգիտանայ քրիստոնեայ Եկեղեցին, եւ որմէ չէ գիտցած հանել գանձեր հրճուանքի եւ մխիթարութեան. այն թէ՝ Յիսուս կենդանի է, եւ թէ իր ստեղծիչ գործունէութիւնը ի գործ կը դրուի մարդկային հոգիին մէջ աճեցուն ուժգնութեամբ եւ համբերատարութեամբ մը զոր ոչինչ կրնայ տկարացնել. «կը կենամ դրան դէմ ու կը զարնեմ». մեր Փրկիչը կենդանի է! կենդանի, այսինքն ոչ միայն իշխող երկինքին մէջ, այլ ունենալով կեանքը իր իսկ մէջ, կ'ապրի եւ կ'ուզէ ապրիլ նաեւ մեր մէջ։

«Որովհետեւ ես կ'ապրիմ, դուք ալ պիտի ապրիք» կ'ըսէր առենօք, եւ եթէ ունինք այսօր ճշմարիտ կեանք, ոչ անոր համար որովհետեւ Յիսուս ապրած է ասկէ քսան դար առաջ, այլ որովհետեւ կ'ապրի եւ իր կենդանացուցիչ ուժը թափանցեր է եւ կը թափանցէ շարունակ մեր հոգիներուն մէջ։

II

Եկեղեցիի գլուխ Յիսուսը չի դադրիր առաջնորդելէ, ներշնչելէ հոգիները, եւ չեմ վարանիր աւելցնելու՝ կը շարունակէ Իր յայտնութեան գործը։

Քրիստոնեաներ կան որոնք առանձնայատուկ ձեւով «Յիսուսի թուղթեր» են. կնքուած աստուածային դրոշմով մը, Եկե-

digitised by A.R.A.R.@

ղեցին կը բերեն նոր ճշմարտութիւն մը, կամ մանաւանդ նոր կիրարկումը՝ արդէն իսկ ծանօթ սկզբունքին։ Անոնք ստացած են առաքելութիւնը՝ յայտնելու աշխարհին Աւետարանին մէկ երեսը զոր քրիստոնեաները տակաւին չէին տեսած։

Եղբայրներ, սխալ չհասկնաք իմ խօսքերուս իմաստը։ Ես չեմ ըսեր թէ Ս. Գրոց յայտնութիւնը անկատար է, ընդհակառակն, կը խորհիմ թէ, փրկութեան խնդրին շուրջ, սրբազան գրուածքները կը պարունակեն վերջնական յայտնութիւնը, ինչպէս որ մէկ միջնորդ կայ Աստուծոյ և մարդոց միջև, որ է Յիսուս Քրիստոս։ Հեռու ինձմէ մըտածումը խախտելու հեղինակութիւնը գըրուածքներուն, և Ս. Գրոց յայտնութիւնը կասկածելի ընելու՝ ներշնչումներովը թերակշիռ միսթիքականութեան մը։

Առաքելական գրուածքները միշտ պիտի ըլլան մեզի համար աղբիւրը և փորձաքարը ճշմարտութեան։

Բայց կը կարծէ՞ք որ քրիստոնեայ եկեղեցին սպառած ըլլայ Աւետարանին հարըստութիւնները, հասկցած ըլլայ անոր ամբողջ արժէքը, և նկատի առած՝ բոլոր հետեւանքները։ Չունի՞ք տպաւորութիւնը թէ կայ յայտնութեան մէջ, անհատներուն և ընկերութեանց համար, վերակենցաղման ոյժ մը որուն տարածութիւնը ցարդ ոչ ոք չափած է, և զոր Աստուծոյ Հոգին թափանցել կուտայ հոգիներուն մէջ, անոնց յայտնելով քիչ առ քիչ քանի մը փշրանքները ճշմարտութեան. կրնանք յիշել քրիստոնէական ճշմարտութիւններ, որոնք խառնուած են Աւետարանին մէջ, բայց որոնք հոն ոչ մէկ տեղ ներկայացած ըլլան ամբողջ գրերով, եւ որոնք յայտնուած են մարդկային խղճմտանքին, վերէն ներշընչուած քրիստոնեայի մը կողմէ։ Յիսուս չէ՞ր որ խորտակեց գերիներուն կապանքները. և սակայն պարսաւի խօսք մ'իսկ չէք գըտներ գերութեան մասին Նոր Կտակարանի գրութեանց մէջ. բայց, օր մը, Քրիստոսի Հոգին փորագրեց քրիստոնեայ խղճմտանքի մը մէջ այս դատապարտութիւնը, որ տըրամաբանական հետեւանքն էր ամբողջ Աւետարանին, և այս խղճմտանքը աշխարհին համար եղած է թուղթ մը որուն աստուածային հեղինակութիւնը պարտադըրուած է, և տապալած՝ ամէն խոչընդոտները։

Ամբողջ Եկեղեցին դողդղաց և ճանչցաւ ձայնը իր տիրոջ։

Այս պայծառ օրինակը կը ցցէ աւելի մութ բայց յարատեւ իրականութիւն մը։ Միայն քանի մը մեծ անձնաւորութիւններ՝ Ս. Օգոստինոս մը, Լուտեր մը, Կալվին մը, Վինէ մը չեն որ կը յայտնաբերեն ճըշմարտութեան նոր երես մը։ Ճշգրիտ ըլլալու և իրերուն խորը երթալու համար, պէտք է ըսել որ ամէն քրիստոնեայ, որքան համեստ ալ ըլլայ, մէջտեղ կը բերէ յայտնութիւն մը։ Անհունօրէն այլազան հոգիներ լոյսի մէջ կը դնեն անհամար երեսները ճշմարտութեան, և անհունօրէն այլազան պարագաները՝ ուր Տիրոջ Հոգին կը բացատրուի, դուրս հանել կուտան անհուն աղբիւրները Աւետարանին։ Ինչպէս ոսկիի ձոյլ մը, որուն արժէքը ա՛լ աւելի կը մեծնայ որչափ վերածուի կտորներու կամ շքադրամներու, Աւետարանը կը քաղաքերծէ իր հարստութիւնները՝ թափելով հոգիներուն մէջ, ուր կը դրոշմէ արքայական պատկեր մը. կամ լաւ եւս, պահելով բացատրութիւնը Ս. Պօղոսի, ամէն քրիստոնեայ «թուղթ» մըն է ուրկէ կրնանք քաղել Յիսուս Քրիստոսի մէկ նոր մտածումը։

III

Այսպէս է որ Փրկիչը, միշտ կը գործէ երկրի վրայ և կը գործածէ հոգիները, հոն շողացնելու համար բազմապատիկ երեսները ճշմարտութեան։

Բայց, զարգանալով հանդերձ դարերուն ընդմէջէն Աւետարանին ճանաչողութիւնը, յառաջդիմաբար լուսաւորելով հանդերձ առաջին յայտնութեան խորութիւնները, կը ծառայեցնէ նոյնպէս քրիստոնեաները, տանելու՝ մեղաւորներուն և թերահաւատներուն՝ էական պատգամը, միշտ նոյն՝ քսան դարէ ի վեր, կ'ուզեմ ըսել փրկութեան աւետիսը. և մանաւանդ այս իմաստով է որ պէտք է նկատի առնուի բընաբանիս խօսքը. «Դուք թուղթն էք Յիսուս Քրիստոսի»։

Փորձառութեամբ գիտենք թէ ճշմարտութիւնը մեզի կը հպի երբ մարմնաւորուած երևայ անձի մը մէջ. ոչ մէկ գրուածք ունի զօրութիւնը լեզուին, և եթէ, օրինակի համար, Յովհաննէս Մկրտիչ մը ու-

digitised by A.R.A.R.@

նեցաւ այնքան ազդեցութիւն իր ժամանակակիցներուն վրայ, որովհետեւ կրցաւ ինքզինք սահմանել ըսելով. «Ես ձայն մըն եմ.» կրնայ պատահիլ որ ընթերցում մը հաւատքի բերէ հոգին, բայց ատիկա լոկ բացառութիւն մըն է։ Կեանքն է որ կը ծնի կեանք։

Ձեր յիշողութենէն կրկին անցուցէք պատմութիւնը Եկեղեցիին, առաջին դարերէն մինչեւ մեր օրերը, եւ պիտի տեսնէք որ դարձերուն մեծ մասը արդիւնք է շըփոթումին անձնաւորութեան մը հետ, որուն օրինակը կամ խօսքերը խռոված են խիղճերը։ Յիսուս կ'առնէ մին իր աշակերտներէն. կը գրէ անոր սրտին մէջ սիրով լեցուն գիր մը, գեղուն սրբութեամբ, եւ զայն կ'ուղղէ թերահաւատի մը, մեղաւորի մը, թերեւս յուսահատի մը, եւ այսպէս է որ հոգիները զգածուած, դարձի եկած, փրկուած են, եւ Աստուծոյ տիրապետութիւնը յառաջդիմեր է։ Կ'երթան անոնք, կը սփռուին աշխարհի վրայ, քսան դարէ ի վեր, այս «թուղթերը Յիսուս Քրիստոսի», կը բազմապատկուին մեր օրերուն, կը թափանցեն մեծ քաղաքներու թշուառ թաղերուն մէջ, ամենէն խաւար եւ ամենէն վայրենի երկրամասերուն մէջ, կրկնելով կորսուած հոգիներուն շնորհքին պատգամը եւ ցոյց տալով Քրիստոսի սէրը, ոչ միայն մարդկութեան առ հասարակ, այլ անհատներուն որոնք առանց այս անվիճելի ապացոյցին, պիտի չկրնային երբեք նըկատուիլ առարկաներ յաւիտենական ողորմութեան։

## IV

«Դուք էք . . .»

Այս բառերը զորս առաքեալը կ'ուղղէր Կորնթոսի քրիստոնեաներուն, առանց սեէ խտրութեան, կը պատշաճին հաւասարապէս մեզի, եւ կ'իյնան իրենց ամբողջ ծանրութեամբ մեր խղճմտանքներուն վըրայ։ Եղբայրներ, քոյրեր, խորհեցէք «թէ ձեզմէ իւրաքանչիւրը թուղթ մ'է Յիսուս Քրիստոսի»։

Այն օրը ուր դարձի եկած էք, Տէրը ձեզ դրոշմած է Իր կնիքով եւ Իր Հոգիով, Ան դրոշմած է ձեր սրտին մէջ պատգամը եւ զայն փոխանցելու պաշտօնը տուած է ձեզի. այսուհետեւ դուք Յիսուս Քրիստոսի մէկ խօսքն էք։

Մինայի քարէ տախտակները մեծ արժէք ունէին Իսրայէլացւոց համար. զանոնք ընտրելով Աստուած սրբացուցած է։ Բայց անոնք լերան կողերուն վրայ ցրուած անձեւ չերտերէն աւելի ջինջ մարմարէ մը չէին։ — Մեր Սուրբ Գրքին թերթերը կըրնային անսուրբ գաղափարներ ալ կրել. հոն տպուելով, Աստուծոյ շունչը զանոնք սրբացուցած է։ Ձեր անձնական արժէքին պատճառաւ չէ որ Փրկիչը ձեզ ընտրած է ըլլալու աւանդապահը իր խօսքին, այլ ձեզ ընտրելով, ձեզ սրբացուց։ Ձեր սըրտերը արատաւորուած, անպատուուած էին աշխարհային մակագրութիւններով, բայց Փրկիչը ջնջելով այս անմաքուր բառերը, հոն դրոշմեց բոցավառ գրերով քանի մը մեծ գաղափարներ՝ ներշնչուած իր սէրէն։ Ս. Պօղոս խօսելով Աւետարանին մասին, կ'ըսէր. «կը կրենք այս գանձը հողեղէն անօթներու մէջ»։ Կրնաք ինքզինքնիդ յարմարցնել այս աստացուածքին։ Բայց մի մոռնաք որ գանձ մը կը կրէք։ Պարտաւոր էք ձեզի համար իսկ խոնարհ ըլլալ։ Բայց իրաւունքը չունիք խոնարհ ըլլալու Յիսուս Քրիստոսի համար։ Արդ, դուք Աւետարանին մէկ բեկորն էք։ Արտօնուած չէք խորհելու որ անօգուտ էք։ Դուք ոչինչ էք ձեզի համար։ Բայց կը կրէք միայն մէկ բառը Քրիստոսի, դրոշմուած ձեր սրտին մէջ. այս բառը կը բաւէ բաղդատուելու անհուն արժէքի մը հետ։

Այդ պատճառաւ կրկին պատասխանատուութիւն մը ունիք։

Նախ, պարտիք պահպանել թանկագինօրէն այն չտեմարանը որուն կրողն էք դուք։ Պարտիք ինքզինքնիդ պահել այն ամենուն դէմ որոնք կրնան ջնջել ձեր մէջ տպուած նշանագրերը Տիրոջ Հոգիին։ Հաւատարիմ քրիստոնեաներ եղա՞ծ էք. ձեր բարեկամները, ձեր ծնողները, ձեր շրջանակը կրնա՞ն միշտ ունենալ տպաւորութիւնը թէ իրենց կուգաք Յիսուս Քրիստոսի կողմէ, թէ դուք աստուածային պատգամ մըն էք։ — Ձեր սրտերը կը նմանին այն գեղնած թուղթերո՞ւն որոնց տառերը զատորոշելու մեծ դժուարութիւն կայ. կամ, հակառակը, միշտ պարզ, միշտ հաւատարիմ քրիստոնեանե՞ր էք

digitised by A.R.A.R.@

որոնց բարեպաշտութիւնը չի հպատակիր որևէ փոփոխման։ Աստուածային գիրը պահա՞ծ է ձեր մէջ առաջին օրերուն իր կոկիկութիւնը և փայլը։

Այն ատեն, հասկցէք, երկրորդ պարտք մըն ալ ունիք։ Ինչպէս «դուք Քրիստոսի մէկ թուղթն էք,» մէկու մը ուղղուած էք։ Ձեր շուրջը, հաւանաբար ձեր ընտանիքին մէջ, ամէն պարագայի տակ, այն միջինին մէջ ուր կ'ապրիք, կան հոգիներ որոնց մօտ Յիսուս կ'ուղարկէ ձեզ անոնց տանելու Իր ողջոյնը և լոյսը։ Թերևս չէք ճակատագրուած խօսելու ամբողջ աշխարհին, ինչպէս մեծանուն քրիստոնեաները կամ մեծ քարոզիչները զորս կրնանք բաղդատել Նոր Կտակարանի Կաթուղիկէ (այսինքն ընդհանրական) թուղթերուն հետ։ Բայց դուք առնուազն մասնաւոր թուղթ մըն էք և կոչուած էք կատարելու առաքելութիւնը քաջալերութեան, խղճմտանքի վերակոչման, և անշուշտ նաև մխիթարութեան։ Անհաւատի կարծրացած մեղաւոր մը որ վտանգին տակն է յաւիտենական կորուստին. չունի՞ք անոր լուրջ ազդարարութիւն մը և մանաւանդ կարեկից խօսք մը որ կարենայ խորտակել իր արգելքները։ Ահա հոգի մը որ դուրս ելած է ճամբէն։ Փաստերը այլևս տիրականութիւն չունի՞ն խաւարներուն մէջ խարխափող այս յոգնած իմացականութեան վրայ։ Բայց չունի՞ք անոր համար մին այն յաղթող խօսքերէն որոնք խղճմտանքը կը սարսռացնեն։ Ահա լքուած սիրտ մը. պարտքին տակը չէ՞ք անոր նետելու սփոփանքը և յոյսը։ Մե՜ծ պատասխանատուութիւն անշուշտ։ Բայց կեանքին նման բան մը, սովորաբար անհամ ու տափակ, կը բարձրանայ երբ կարենանք ըսել. «Ես ե՛մ, պարտիմ ըլլալ զիս շրջապատողներուն համար Յիսուս Քրիստոսի թուղթը»։

JEAN LAFON Թարգմ. Հ. Գ.

## ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

# ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԸՍՏ ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՍՈՒՐԲՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Շատերու համար ծանօթ իրողութիւն մըն է թէ, Համատեսական Աւետարանները եւ Սուրբն Յովհաննէս անհամաձայն կը թուին իրարու հետ, Յիսուսի խաչելութեան օրուան նկատմամբ։ Արդարեւ, ըստ Համատեսականներու, Յիսուսի խաչելութիւնը և մահը Նիսան (Ապրիլ) ամսուան 15ին, Ուրբաթ օր մըն էր որ տեղի ունեցաւ, իսկ ըստ Սուրբն Յովհաննու՝ ամսուն 14ին։ Թէև, այս մասին Սուրբ Գրոց մեկնիչներ և քննադատներ ճգնեցան շատ մը լուծումներ տալ, սակայն այդ բոլորը անբաւարար և անգոհացուցիչ ըլլալով, չկրցան իրենց միջև գտնուող անհամաձայնութիւնը եւ տարակուսանքը անհետացնել։ Որոշ է որ, խաչելութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ օր մը, սակայն խնդիր է գիտնալ թէ Նիսանի 14ի՞ն էր թէ 15ին։

1. — Պիտի ջանանք ապացուցանել, ինչ որ կը թուի ըլլալ Համատեսականներուն և Սուրբն Յովհաննու ճշգրիտ իմացումը, իբրև հիմնակէտ ունենալով իրենց ամբողջութեան մէջ խնամքով ուսումնասիրուած բնագիրները։

2. — Պիտի թուենք այն փորձերը, որոնցմով ուզած են միջին եզր մը գտնել խնդիրը լուծելու եւ Համատեսականներն ու Սուրբն Յովհաննէսը փոխադարձաբար համաձայնեցնելու։ Ցոյց պիտի տանք նաեւ Համատեսականներու եւ Սուրբն Յովհաննու ժամանակագրական տեսակէտները, խաչելութեան օրուան նկատմամբ։

3. — Ի վերջոյ պիտի յայտնենք մեր կարծիքը այս խնդրոյն մասին, ճշդելով խաչելութեան օրուան ամսաթիւը։

digitised by A.R.A.R.@

## Ա.

## ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆՆԵՐԸ

*Նախապէս պէտք է ուշադրութիւն դարձնել որ, Համատեսականներուն յուշումներուն մէջ (նո՛յնիսկ անոնցմէ ամենէն կարեւորներուն), Յիսուսի խաչելութեան եւ մահուան օրը որոշ չի դիտուիր, այլ՝ միա՛յն վերջին ընթրիքը։ Այսուամենայնիւ, վերջին ընթրիքը խաչելութեան նախընթաց օրը տեղի ունեցած ըլլալով, կարելի է մակաբերել այն օրը յորում Փրկիչը խաչուեցաւ և մեռաւ, ըստ Համատեսականներուն։*

*Ահաւասիկ թէ ի՞նչպէս անոնք կը բացատրեն և կը ճշդեն վերջին ընթրիքը՝* «Եւ յառաջնում աւուր Բաղարջակերացն յորժամ զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն . . .» *(Մարկոս ԺԴ. 12)*։ «Եւ իբրեւ երեկոյ եղեւ, գայ երկոտասանիւքն հանդերձ» *(Մարկոս ԺԴ. 17)*։ «Եւ յառաջնում աւուր Բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն . . . .» *(Մատթէոս ԻԶ. 17)*։ «Եւ իբրեւ երեկոյ եղեւ, կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն» *(Մատթէոս ԻԶ. 20)*։ «Եկն օր Բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասեքն» *(Ղուկաս ԻԲ. 7)*։ «Եւ առաքեաց զՊետրոս . . .» *(Ղուկաս ԻԲ. 8)*։ «Եւ իբրեւ ժամ եղեւ, բազմեցաւ, եւ երկոտասան առաքեալքն ընդ նմա» *(Ղուկաս ԻԲ. 14)*։

*Վերոյիշեալ բնագիրներէն յստակօրէն կը հետեւի.*

ա) *Թէ՝ Յիսուս իր վերջին ընթրիքը կատարեց Բաղարջակերաց տօնին առաջին օրուան երեկոյին, նոյն օրուան առաւօտուն իր աշակերտներուն պատրաստութեան համար հարկ եղած հրամանը տալէն վերջ։*

բ) *Եւ քանի որ, ըստ Մարկոսի և ըստ Մատթէոսի, աշակերտներն էին որ, Պասեքի տօնին պատրաստութեան համար առաջին ձեռնարկը ըրին Յիսուսին, շատ բնական և ճշգրիտ ըլլալ կը թուի ենթադրել որ, օրինական օրուան մը մէջ այս հանդիսութիւնը և կամ վերջին ընթրիքը տեղի ունեցաւ։*

*Այս բոլոր տուեալները, յստակօրէն ցոյց կուտան թէ՝ Նիսան ամսուան 14-ն էր։ Այսպէս, նոյն օրուան առաւօտուն՝ իրենց միջեւ տեսակցութիւնը, և նոյն երեկոյին ալ վերջին ընթրիքը տեղի ունեցաւ։ Հրէից Պասեքի կամ Բաղարջակերաց տօնին ծագման և նշանակութեան մասին մանրամասնութեամբ գրուած է Ելից ԺԲ., Թուոց ԻԸ. 16, և Բ. Օրինաց ԺԶ. 1–8 գլուխներուն մէջ։*

*Հրէից համար Նիսանը տարուան առաջին ամիսը նկատուած էր ըստ Ս. Գրոց. «Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ»։ (Ելք ԺԲ. 1)։ «Պասեք» բառը կը նշանակէ «անցք»։*

*Թէև Պասեքի տօնը աւանդութեամբ Մովսէսի կ'ընծայուի, սակայն անոր ծագումը Հրէից համար Նախամովսէսեան շրջանէ մը կուգար։ Ելից գիրքէն (Գ. 18, Ե. 1, Է. 16. Ը. 27, Ժ. 10, ԺԲ. 21) գիտենք թէ Պասեքի տօնը իրենց համար վաղածանօթ տօն մըն էր արդէն։ Յետագային սակայն, Պասեքի տօնը Հրէից համար եղաւ ազգային ազատագրութեան և անկախութեան տօնը։*

*Պասեքի տօնին առթիւ, լուսնի լրումը Նիսանի 15ին կ'իյնար, որով 14ին իրիկունը պատկական գառը կը մորթէին և գիշերուան առաջին պահուն ընթրիքը տեղի կ'ունենար (Ելք ԺԲ. 6)։*

*Գառը կը մորթուէր ի յիշատակ Աստուծոյ բարկութեան ողոքման, և մահուհրեշտակի անցքին՝ Իսրայէլացւոց տուներուն վրայէն, առանց երբեք իրենց վնասելու։ Բաղարջ հացը՝ վշտի, արտասուքի և տառապանքի հացը կը յիշեցնէր իրենց. դառն խոտերը՝ եգիպտական տաժանելի ծառայութիւնները, իսկ* հոզորէթ *կոչուած աղիւսագոյն համեմը՝ Փիթոն և Ռամսէս բուրգերուն շաղախը։ Ի մի բան, Պասեքի տօնը իրենց կը յիշեցնէր Աստուծոյ զօրութիւնը և բոլոր այն սքանչելիքները զորս Աստուած ցոյց տուած էր իրենց, Եգիպտոսէ «ելք»ին ժամանակ, ուր՝ աւելի քան չորս հարիւր տարիներ ստրկութեան և ծառայութեան մէջ մնացած էին Փարաւոններու գերիշխանութեան ներքեւ։*

*Գալով Հրէից Տօմարին, իրենց քաղաքական թուականը կը սկսի աշխարհի ստեղծագործութենէն. և մեր ներկայ թուականը կը համապատասխանէ իրենց* 5702

digitised by A.R.A.R.@

*թուականին, որ կը սկսի Սեպտեմբերի 29/9ի աշնան գիշերահաւասարին։*

*Հրէական ամիսը կը սկսի լուսնի երեւման հետ եւ իրենց տօմարական դրութիւնը հիմնուած է լուսնի շարժումներուն վրայ։ Իրենց տարին կը բաղկանայ 12 ամիսներէ, եւ ամէն ամիս ունի 29–30 օրեր. հետեւաբար տարին 354 օր ընդունուած է։ Բայց նկատելով որ արեգակնային տարին 365 օրերէ կը բաղկանայ, այդ յաւելեալ 11 օրերով, երկու կամ երեք տարին անգամ մը լուսնական ամիս մը կ'աւելցնեն, եւ այդ կը կոչեն նահանջ տարի որ կը բաղկանայ 384 օրերէ։*

*Զատկական գառը Քրիստոսի օրինակն էր, եւ ընթրիքը՝ Ս. Հաղորդութեան սուրբ խորհուրդին պատկերացումը (Ա. Կորնթ. Ե. 7, Ժ. 17–18)։ Ստուգիւ Թուոց ԻԸ. գլխուն 16րդ համարին մէջ կը կարդանք. — «Եւ յամսեանն առաջնում, ի չորեքտասաներորդում ամսեանն՝ զատիկ Տեառն»։ Եւ դեռ աւելին, յստակօրէն մեզի ցոյց կը տրուի Ելից ԺԲ. 18րդ համարին մէջ. «Ի սկսանել չորեքտասաներորդի աւուր ամսոյն առաջնոյ յերեկորեայ բաղարջ ուտիցէք մինչեւ ցքսան եւ մի օր ամսոյն ցերեկոյ»։*

*Պրն. Կոտէ* (M. Godet)(*), *հետեւելով Համատեսականներուն, կը կարծէ թէ, Յիսուսի եւ աշակերտաց միջեւ եղած խօսակցութիւնը պէտք է որ տեղի ունեցած ըլլայ, ո՛չ թէ Նիսան ամսուան 14ի առաւօտուն, այլ 13–14ի երեկոյեան դէմ, վասնզի՝ Հրէից պաշտօնական օրը, երեկոյեան ժամը 6ին կը սկսէր. հետեւաբար իրենց 14րդ օրը կը սկսէր 13ի սովորական օրուան միջոցին (իբրեւ իրենց բաղարջակերաց առաջին օրը)։ Սակայն մենք այդ մասին յետոյ պիտի անդրադառնանք։*

*Սակայն այժմէն ըսենք թէ, Պ. Կոտէն այսպէս տրամաբանելով, այս խօսակցութիւնը տեղի ունեցած կ'ենթադրէ ամսոյն 14ի առաւօտուն եւ ո՛չ թէ երեկոյեան։*

*Միւս կողմէն, շատ որոշ է որ, Համատեսականները կը թուին հաստատել թէ, վերջին ընթրիքը տեղի ունեցած է 14ի երեկոյեան. իսկ իրենց միջեւ խօսակցութիւնը՝ նոյն օրուան առաւօտուն։*

(*) *Մեկնութիւն Սրբոյն Յովհաննու Աւետարանին Գ. Հատոր. էջ 614։*

*Յիրաւի, Պրն. Կոտէի տուած բացատրութիւնը ուրիշ անհաւանականութիւն մըն ալ կը ներկայացնէ։ Կրնա՞յ մեզի արդեօք հաւատացնել թէ՝ բոլոր հրեաները իրենց Պասեքի տօնը 13 Նիսանի սովորական օրուան մը մէջ կը տօնէին։ Անտարակոյս, կրնանք պատասխանել, ո՛չ։ Ինչո՞ւ համար ուրեմն Յիսուս այս անգամ այդ օրը կատարած ըլլայ նոյն տօնը իր աշակերտներուն հետ։ Ուստի, ան շատ կը հեռանայ Համատեսականներուն բնական իմացումէն, որոնց համեմատ, ինչպէս տեսանք արդէն, Յիսուս իր վերջին ընթրիքը սովորական օրուան մը ընթացքին կատարեց իր աշակերտներուն հետ։*

*Ամփոփելով ըսենք թէ, Համատեսականները կը հաստատեն թէ, Յիսուս իր վերջին ընթրիքը կատարեց 14 Նիսանին իրիկունը եւ հետեւաբար խաչուեցաւ 15 Նիսանին։*

## ՍՈՒՐԲՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ

*Մինչդեռ Համատեսականներուն ցուցմունքները ուղղակի վերջին ընթրիքը միայն նկատի կ'առնեն, եւ անուղղակի կերպով իրենց բնագրին հետեւութիւններէն կը մակաբերենք Յիսուսի խաչելութեան օրը, Սուրբն Յովհաննէս հատուածներ ունի, որոնցմէ ոմանք վերջին ընթրիքի, եւ ուրիշներ խաչելութեան կը վերաբերին։ Հոս կը նշանակենք զանոնք։*

1. — *Վերջին ընթրիքի մասին. ԺԲ.* 1. «Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա(*) . . .»։ *Ուրեմն՝ Պասեքի տօնը 14 Նիսանին ըլլալով, վերջին ընթրիքը կատարուած պէտք էր ըլլար նախընթաց օրուան մէջ, 13 Նիսանին։*

*Մեր այս եզրակացութիւնը կատարե-*

(*) *Բեթանիա (այժմ՝ էլ-Ազարիյէ) Համբարձման լերան արեւելեան կողմը գտնուող գիւղ մըն է, ուր՝ Յիսուս յաճախ կ'երթար. հոն կը գտնուէր Մարթայի, Մարիամի եւ Ղազարոսի տունը։ Բեթանիոյ մէջն էր որ (Սիմոն բորոտի տան մէջ), Մարիամ անոյշ իւղով օծեց մեր Տիրոջ մարմինը։ Հոս էր դարձեալ, որ մեր Տէրը իր բարեկամը՝ չորեքօրեայ մեռեալ Ղազարոսը յարոյց ի մեռելոց (տե՛ս նաեւ Յովհ. ԺԱ. 1-46)։*

digitised by A.R.A.R.@

լապէս կը համաձայնի Յիսուսի խաչելութեան հետ եղած բաղդատական ցուցմունքներուն։

2. — *Խաչելութեան մասին.* ա) *Յիսուսի խաչելութեան օրը, երբ զԱյն Ատեան տարին հարցաքննելու համար, հրեաները դեռ զատկական գառը չէին կերած.* «Եւ ածին զՅիսուս ի վանիցն Կայիափայ յապարանս դատաւորին, եւ էր այգուց. եւ նոքա ոչ մտին յապարանսն, զի մի՛ պղծեսցին, այլ զի ուտիցեն զզատիկն» *(Յովհ. ԺԸ. 28)։ Ուստի, հետեւելով Նախադասութեան բնական իմաստին, «զի ուտիցեն զզատիկն»ը 14 Նիսանն էր, այսինքն՝ Յիսուսի խաչելութեան օրուան առաւօտը։* բ) *Դարձեալ, Յովհ. ԺԹ. 14ի մէջ նշանակուած է. «էր Ուրբաթն զատկի»։ «Զատիկ»ը Նիսան 14ին կատարուող զոհն է. ինչպէս նաեւ՝ Բաղարջակերաց (իմա՝ Պասեքի կամ Զատկի) տօնական օրը։ Հետեւաբար Յիսուսի խաչելութեան Ուրբաթ օրը, բուն տօնին պատրաստութեանց նուիրուած օրն էր։ Ուրեմն, կրնանք ըսել թէ՝ 14 Նիսանին մէջ կ'իյնար այդ տարուան Ուրբաթ օրը։* գ) *Նոյնպէս Յիսուսի խաչելութեան յաջորդ Շաբաթ օրը «օր մեծ շաբաթուն այնորիկ» կը կոչուէր (Յովհ. ԺԹ. 31)։ Այդ տողերուն մէջ ակնարկուած Շաբաթը սովորական օր մը չէր, այլ կրկնապէս տօնական Շաբաթ մը, վասնզի, նոյն Նիսան 15ին կ'իյնար Բաղարջակերաց կամ Պասեքի տօնը։*

*Ուստի, Ս. Յովհաննու ցուցմունքներէն՝ որոնք իրենց բնական իմաստովը առնուած են, կ'եզրակացնենք թէ՝ Յիսուս իր վերջին ընթրիքը կատարած էր Նիսան 13ին, և խաչուած էր Նիսան 14ին, և կամ, աւելի ճշգրիտ ըլլալու համար՝ Պասեքի տօնին վաղորդայնին։ Ուստի, երկուքին միջեւ անհամաձայնութիւնը հետեւեալ կերպով յառաջ կուգայ։*

*Համատեսականները.* — ա) *Վերջին ընթրիքը՝ Պասեքի նախընթաց օրը (14 Նիսանին)։* բ) *Խաչելութիւնը՝ Պասեքի օրը (15 Նիսանին)։*

*Սուրբն Յովհաննէս.* — ա) *Վերջին ընթրիքը՝ Պասեքի նախընթաց օրէն առաջ (13 Նիսանին)։* բ) *Խաչելութիւնը՝ Պասեքի նախընթաց օրը (14 Նիսանին)։*

## Բ.

*Այժմ՝ մեզի կը մնայ Համատեսականները և Սուրբն Յովհաննէսը իրարու հետ համաձայնեցնել։ Այս բանը կարելի է կատարել անհամաձայն բնագիրներու համաձայնութեան մեթոտով։ Ըստ այս մեթոտին, պէտք է ըսել կամ ըսել տալ Յովհաննէսին, ինչ որ Համատեսականները կը հաստատեն, և կամ գտնել Յովհաննէսին մէջ այն իրողութիւնները զորս Համատեսականները կը պարզեն, և վերջապէս կարգ մը հանճարիմաստ միջոցներով, ապացուցանել թէ՝ իրականութեան մէջ ոեւէ տարակարծութիւն գոյութիւն չունի Համատեսականներուն և Սուրբն Յովհաննու բնագիրներուն միջեւ։ Այստեղ անշուշտ ամենէն դժուար կէտը, Սուրբն Յովհաննէսը Համատեսականներու շրջանակին մէջ մտցնելն է, անով եզրակացնելու համար թէ՝ ըստ մեր չորս Աւետարաններուն, Յիսուս իր վերջին ընթրիքը կատարեց 14 Նիսանին և խաչուեցաւ նոյն ամսուան 15ին՝ Պասեքի տօնին։ Սակայն մենք հոս, բաւական յստակ և բացայայտ բնագիրներուն կողմէն դժուարութեանց կը հանդիպինք, և աւաղ թերեւս մեր կատարելիք եզրակացութիւնը շատ անհաւանական թուի։*

*Ոմանք, Ս. Յովհաննէսի յիշած «զի ուտիցեն զզատիկն»ը (ԺԸ. 28) տարբեր կը մեկնեն, ըսելով թէ՝ ո՛չ թէ զատկական գառնուկին զոհին ակնարկութիւնը կայ հոն, այլ՝ ուրիշ տեսակ զոհ մըն էր, որ կրնար տեղի ունենալ Բաղարջակերաց տօնին ընթացքին (15–21 Նիսան)։ Հրեաները, նոյն օրը դատաւորին ապարանքը չկրցան մտնել, որպէսզի «մի՛ պղծեսցին, այլ զի ուտիցեն զզատիկն»։ Անշուշտ վերի տողերուն ակնարկութիւնը 15 Նիսանի համար եղած է։*

*Գալով ԺԹ. գլխուն 14րդ համարին՝ «էր Ուրբաթն Զատկի», Յիսուսի խաչելութեան համար ըսուած է, ո՛չ թէ անոր համար որ նախընթաց կամ պատրաստութեան օրն էր Պասեքին, այլ Պասեքի տօնին՝ «Պասեքի Ուրբաթ» մըն էր (ինչպէս որ մենք այժմ կը կոչենք Զատկի Երկուշաբթի, Ս. Յարութեան Կիրակիին յաջորդող օրը եայլն)։*

*Շաբաթ օրը որու մասին Ս. Յովհան-*

digitised by A.R.A.R.@

նէս կը խօսի (ԺԹ. 31), կոչուած է մեծ օր մը ո՛չ թէ անոր համար որ կը զուգադիպէր 15 Նիսանին, այլ՝ վասնզի՝ Պասեքի տօնախմբութեանց շրջանին մէջ կ'իյնար (15–21 Նիսան)։ Վերջապէս, եթէ երբեք Ս. Յովհաննէս (ԺԳ. 1) կ'ըսէ թէ՝ վերջին ընթրիքը տեղի ունեցաւ «Յառաջագոյն քան զտօնն Զատկի», այսինքն՝ 15 Նիսանէն առաջ, ասկէ կը հետեւի թէ, վերջին ընթրիքը ճշգիւ կ'իյնար 14ի երեկոյեան, ինչ որ Համատեսականներուն ալ հաստատածն է։

Այս բոլորը դիւրին է ըսել, բայց ասոնց ապացո՞յցը։ Անուանի հեղինակներ, արմատապէս կը մերժեն այս բացատրութիւնը։ Յիսուսի խաչելութիւնը, Պասեքի տօնին՝ 15 Նիսանին չի կրնար տեղի ունեցած ըլլալ, քանի որ, Պասեքի առաջին օրը, 15 Նիսանը տօնական օր մըն էր։

Սակայն վերի համաձայնութիւնը, մեզի պատմական անկարելիութեան առջև կը դնէ. մեկնողական տեսակէտով կարելի չէ համաձայնեցնել։

Ուրիշ հեղինակաւոր միտքեր ևս, փորձած են Համատեսականները Ս. Յովհաննէսի շրջանակին մէջ մտցնել, սակայն այս բանը անհաշտ կը թուի իրականութեան։ Հետեւեալ պատկերը արդեօք չէ՞ եւ չի՞ կրնար ըլլալ չորս Աւետարաններուն ալ տեսակէտը.

Յիսուսի վերջին ընթրիքը 13 Նիսանին։

Յիսուսի խաչելութիւնը 14 Նիսանին։

Համատեսականները թերեւս իրաւունք ունին ըսելու թէ, Յիսուս վերջին ընթրիքը օրինաւոր օրուան մը մէջ կատարեց, իսկ Ս. Յովհաննէս կը հաստատէ թէ՝ հրեաները Յիսուսի խաչելութեան օրուան առաւօտուն դեռ զատկական գառը չէին զոհած։

Գ.

Ուշադիր ընթերցում մը բաւական է հասկնալու համար Ս. Յովհաննու միտքը, ըստ որում Յիսուսի խաչելութիւնը տեղի ունեցաւ 14 Նիսանին, իսկ վերջին ընթրիքը կատարուեցաւ 13 Նիսանին։ Բաց աստի, աւանդութիւնը զանոնք կը հաստատէ։ Ուրեմն ընդունինք զանոնք իբրև վերջնական իրողութիւններ և ի նորոյ քննենք Համատեսականները։

Ամէն բանէ առաջ դիտել տանք թէ, Համատեսականները ժամանակագրական խնդիր չեն յարուցաներ։ Անոնք, աւելի վերջին ընթրիքին կատարուած ըլլալը կը չեշտեն, խնդիր չէ իրենց համար Նիսան 14ի՞ն թէ՝ 13ին։

Եւ քանի որ, օրինական ընթրիքը սովորաբար տեղի կ'ունենար 14 Նիսանի երեկոյեան, Յիսուսի վերջին ընթրիքը կը ներկայացնեն նոյն օրուան մէջ կատարուած։

Ըստ մեր տեսութեան, ժամանակագրական սխալ մը չկայ Համատեսականներուն մէջ. պէտք է ուշադրութեամբ նկատի առնել այս իրողութիւնը։ Սխալ մը եղած պիտի ըլլար իրենց համար եթէ երբեք հաստատէին թէ, Յիսուս իր վերջին ընթրիքը 13 Նիսանին կատարած է։

Համատեսականները իրենց ամբողջութեամբը քննելէ վերջ, կարելի եղաւ հաստատել թէ, ժամանակագրական յաւակնութիւններ և ճշգութիւններ չունին։ Ժամանակագրական նախապաշարում ունեցող միտքերու համար, 14ի վերջին ընթրիքը աւելի բնական կ'երեւի քան թէ՝ 13 Նիսանինը։ Քանի որ իրարու հետ մերձեցման փորձերը ձախողեցան, քանի որ բնագիրները իրարու դէմ պիտի ընդդիմաբանեն, միջոց մը չկա՞յ արդեօք միջին եզր մը գտնելու, որպէսզի տառին ներքև թաքնըւած երևութական սխալները և ժամանակագրական անճշդութիւնները ճշդուին։ Այս մեթոտը մեզի աւելի գոհացուցիչ արդիւնքներու պիտի առաջնորդէ։

Այսպէսով, Համատեսականներուն բնական իմաստը պիտի յարգուի. և Սուրբ Յովհաննու իմացումը պիտի պայծառանայ։ Այլևս պէտք պիտի չմնայ կամայական մեկնաբանութեանց, այս կամ այն խնդրին շուրջ, և մենք պիտի ունենանք հետևեալ վերջին և ճշգրիտ պատկերը. —

13 Նիսան, Յիսուսի վերջին ընթրիքը.

14 Նիսան, Յիսուսի խաչելութիւնը.

15 Նիսան, Շաբաթ, Պասեքի տօն։

Հայացուց՝ Պ. Վ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ԼՈՅՍԷ՛ ԾԱՂԻԿ, ԴՈՒՆ ԻՆՉՊԷ՛Ս...

Յարածըփուն ու բեկբեկ բոյրովն այս թարմ հասակիդ,
Այսօր, ուժգին, հոգւոյս դէմ, բացիր սահանք մ'անցեալէն,
Մինչ քեզ մոռնալ կը կարծէր ան տարիներ այսքան վերջ,
Դո՛ւն՝ շողշողու՛ն լիովին, գըտար զիս մութ ու լըռին...:

Կա՛րճ՝ երկվայրկեան մը միայն, դըպար հոգւոյս, լոյծ, թօնոտ,
Ու փորձեցիր իջնել խոր, սեւ-սաթ գոյլովն աչերուդ.
Բայց հեռացար՝ շուարուն, նոր սա երգէն տրտմախառն...
Զըւարթ տըղան փընտռեցիր, ու չըգըտար... տըխրեցա՛ր...:

Հոգիդ ծաղիկ մ'էր լոյսէ, բացուող՝ կեանքին, արեւուն,
Ես մենամոլ մը թախծոտ, կեանքէն փախչող — խե՛նթ — հեռո՛ւն...
Դուն չը գիտցա՛ր սակայն, ու հեռացա՛ր ալ այդպէս...:

Կ'արեւոտին տակաւին, մատներուդ ջերմ սեղմումէն,
Գորշ գիշերներս յուսաբեկ, տըղու հոգիս՝ թերթ առ թերթ...
...Լոյսէ՛ ծաղիկ, դուն ինչպէ՛ս, սա հոգիին մութին մէջ,

Պիտի ճանչնալ կրնայիր հի՛ն քու ընկերդ մանկութեան...:

Երուսաղէմ
1 Յունիս 1941

ՇԷՆ-ՄԱՀ

# ԻՄ ՊԶՏԻԿ...

Պիտի երբեք չըմբռնես դուն այս հոգիս, ի՛մ պըզտիկ.
Տարօրինակ ու տարտամ, հեռուն վազող խա՛ղ ջուրի,
Կը փայփըլի քեզ հիմա, կը ստուերոտի քիչ ետք, լուռ...:

Երբ ձեւերէդ կը բըխի հոգիդ աղուո՛ր, հո՛ծ՝ ինծի,
Ճիշդ այդ պահուն, շատ ուժգին, սեղմել կ'ուզէ քեզ հոգիս...
Կը վըռընտեմ բայց իսկոյն, — չե՛ս հասկընար, կը տըխրի՛ս...:

Կը մօտենաս երբ վախկոտ, պզտիկ լոյսին իմ սըրտի,
Քանի մը օր, քաղցրահունչ կ'երգէ նըւագը յոյսի...
Կը հեռանամ քեզմէ որ հոգիդ՝ մինա՛կ, տառապի,

Ու տառապիմ ե՛ս ալ՝ լուռ, որ չը հասնիս դուն քեզմէ,
Ու չը հասնի լոյս ու մեղր սա կարծեցեալ սէրը մեր,
Ան միշտ դառնայ ալ ինծի, շատնայ քեզմով իմ գիշեր...:

Սակայն յոգնած, խեղճ պզտիկս, դըժուարամարս այս խաղէն,
Դուն խոյս կուտաս ալ ինձմէ, վըրիժառու՝ կը դաւես,
Որմէ՝ հոգիս, շա՛տ տխուր, կը վարժըւի խեղճ սիրոյս...:

Բայց դուն երբեք չըմբռնե՛ս պիտի հոգին իմ այս պիրկ...:

Երուսաղէմ
12 Ապրիլ 1941

ՅԱԻԱՆ

## ՊԱՂԵՍՏԻՆԱԳՐԱԿԱՆ

# ԱՔԱԱԲԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՄԱՐԻԱՆ

### Բ.— ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԱՔԱԱԲԻ ԺԱՄԱՆԱԿ

*Հին Ուխտի մէջ* (Գ. Թագ.՝ *ԻԱ*. 1–29) *Նաբովթի այգիին պատմութիւնը կը մնայ մշտական յիշատակ մը, սերտօրէն կապուած Սամարիոյ արքայական պալատի շինութեան հետ։ Աքաաբ ուզելով ընդարձակել Ամրիի կառուցած պալատը, խորհեցաւ գնել շրջակայքի քանի մը արտերն ու այգիները, ինչպէս կը պատմէ մինչեւ այսօր։ Ահա՛ համառօտ պատմութիւնը.— «Նաբովթ Յեզրայէլացին այգի մը ունէր Յեզրայէլի մէջ, որ թագաւորին պալատին մօտը կ'իյնար և անոր կալուածին սահմանակից։ Աքաաբ փափաքեցաւ այդ այգին փոխանակել և կամ գնել, բանջարանոց ընելու համար զայն։ Բայց Նաբովթ ոսկէ գնով չուզեց ձեռքէ հանել իր հայրերէն ժառանգած երկիրը։ Աքաաբ այս մերժումէն չափազանց զգածուած ըլլալ ձեւացուց։ Իր ամպարիշտ կինը Յեզաբէլ ջանաց մըխիթարել իր թագաւոր ամուսինը և գոհացում տալ անոր։ Թագաւորին անունով հրովարտակ գրեց քաղաքի ծերերուն եւ ազատարեարներուն, որպէսզի դատապարտեն Նաբովթը և քարկոծեն իբր հայհոյիչ։ Ծերերը՝ ստրկութեամբ և անամօթաբար, հնազանդելով թագաւորի հրամաններուն, պահեցողութիւն հրամայեցին, իբր քաւութիւն անմեղ մարդուն վերագրուած գըրպարտութեանց։ Ապա գտան երկու կեղծ վկաներ որոնք հրապարակաւ ամբաստանեցին Նաբովթը, հայհոյած ըլլալուն համար Աստուծոյ և թագաւորին. ճիշդ ա՛յն ձեւով՝ որ Դանի ցեղէն Դաբրիի դուստր Սալամիթը ուզեցին դատապարտել, միևնոյն անէծքի ամբաստանութեամբ և բոլոր ժողովուրդին կողմէ քարկոծմամբ մեռցնելով* (Ղեւտական՝ *ԻԴ*. 10–16)*. ու գա՛րձեալ ինչպէս որ Ստեփանոսը քարկոծեցին, Մովսէսի օրէնքը փոխած ըլլալու, և Աստուծոյ և Մովսէսի հայհոյած ըլլալու ամբաստանութեամբ* (Գործք Առաքելոց՝ Զ. 8–15)։ *Մահավճիռը անխուսափելի էր. Նաբովթ քարկոծուեցաւ և Յեզաբէլ իր ամուսնոյն հաղորդեց Նաբովթի մահը։ Աքաաբ անտեղեակ չմնաց կատարուած դաւադրութեան, բայց փութաց տէր դառնալ ակնկալածը այգիին։ Գործուած ոճիրը մեծ էր արդարեւ ու Եղիա մարգարէ Աստուծմէ պաշտօն ստացաւ գալիք պատիժը իմացնել Աքաաբի։ Եղիա հաղորդեց անոր՝ որ իբր պատիժ իր գործած մեղքին, ինքն ալ պիտի մեռնէր ու իր արիւնը ամբողջովին պիտի փըճանար, և թէ իր որդիներուն մարմինը քաղաքին մէջ շուներուն, և դաշտերու մէջ թռչուններուն կեր պիտի ըլլար և թէ շուները պիտի լիզէին իր և Յեզաբէլի արիւնը։ Այս ահաւոր ազդարարութիւնը լսելէ յետոյ, Աքաաբ խոնարհեցաւ Տիրոջ առջեւ, զգեստները պատռեց, քուրձ հագաւ և պահք բռնեց։ Աստուած, տեսնելով Աքաաբի դարձի գալուն այս գործերը, որոնք իր ոճիրին հրապարակային զղջումը կը մատնանշէին, ազդարարել տուաւ որ իրեն համար սահմանուած պատիժները պիտի գործադրուէին իր մահէն յետոյ միայն, իր որդւոյն թագաւորութեանը օրով։ Արդարեւ, երբ Աքաաբ ծանրապէս վիրաւորուեցաւ Ռամաթ Գաղաադի մէջ, զինքը փոխադրեցին իր սայլին վրայ ու մեռաւ ճամբու ընթացքին։ Իր արիւնոտ սայլը լուացին Սամարիոյ աւազանին մէջ, շուները իր արիւնը լիզեցին ու պոռնիկները լոգցան արիւնոտ աւազանին մէջ։ Յէու, Աքաաբի որդին ու երկրորդ յաջորդը, Յովրամի տեղ թագաւոր օծուած, նետով մը սպաննեց Յովրամը* (Դ. Թագ.՝ *Թ*. 21–26) *և Յեզաբէլը վար գլորեց Յեզրայէլի տանը տանիքէն։ Շուները կերան թագուհիին դիակը, որմէ գանկոսկրը միայն գտնուեցաւ ինչպէս նաեւ բարձի ոսկորներն ու ձեռքերու ափի ոսկորները։ Յէու ապա սուրէ անցունել տուաւ Աքաաբի եօթանասուն որդիները ու ջնջեց ինչ որ մնացած էր արքայական տանը մէջ, իբր պատիժ բոլոր այն չարիքներուն ու ոճիրներուն՝ զորս Աքաաբ գործած էր, մանաւորապէս իբր փոխվրէժ Նաբովթի սպանութեան։ Աստուածային այս արդար պատիժով կը յարգուէր մարդկային կեանքը ու կը պաշտպանուէր մարդուն ստացուածքը»։*

digitised by A.R.A.R.@

Այս պատմուածքին մէջ դիտելու արժանի պարագայ մըն է կեղծ վկաներու կատարած ստորին ու անարգ դերը։ Նոյն ձեւով էր որ Յիսուս կեղծ վկաներով սխալ դատուէր ու դահճիճներուն ձեռքը սխալ յանձնուէր։ Վերադառնալով Աքաաբի, ան՝ վերահաս վրէժէն առաջ, բոլորովին ընդարձակեց այս առաջին պալատը. արքունի ճարտարապետները այս նոր շինութեան համար գործածեցին սպիտակ կրաքարի գեղեցիկ ու մեծկակ կտորներ, ինչպէս որ կը տեսնենք Ա. Թագաւորութեանց նկարագրութեան մէջ. «... և տունն փղոսկրեայ զոր շինեաց» (ԻԲ. 39)։ Տարակոյս չկայ որ «փղոսկրեայ տունն» բացատրութիւնը յատկանշական ձեւ մըն է միայն, ցոյց տալու համար որ պալատին համար գործածուած էին սպիտակ քարեր, որոնք շատ հաւանական է որ մանաւոր խեղերով կը յղկուէին, ինչպէս կ'ընեն դեռ այսօր Հալէպի մեծ ու ճոխ ապարանքներու շինութեանց մէջ, փղոսկրի կատարեալ գոյն ու փայլ տալու համար տեղական ազնիւ և մարմարիանէ աւելի յարգի քարերուն։ Միւս կողմէ ո՛չ մէկ տարակոյս սակայն՝ որ Աքաաբի պալատին ներքին յարդարանքն ու կահերուն մեծագոյն մասը փղոսկրով պատած էր, գլխաւորաբար գահոյից սրահը, ուր տեղի կ'ունենային պաշտօնական ընդունելութիւնները։ Պալատ մը, վերջապէս, որ դուրսէն ու ներսէն կարելի է ըսել որ ամբողջովին «փղոսկրեայ» էր։ Նոյն ձեւի ակնարկութիւն մըն ալ կայ Ամովսի մէջ (Գ. 15). «... և ապականեսցին ապարանքն փղոսկրեայք, և բազում այլ ապարանք անկցին, ասէ Տէր»։ Կ'ենթադրուի նոյնպէս որ փղոսկրի տեղ յաճախ եբենոսը կը գործածուէր, իբր արքունի կարասիներու շինութեան յարմարագոյն փայտ (ébène, հապէնիմ)։ Դա՛րձեալ Ամովսէն գիտենք (Զ. 4) որ Դամասկոսի թագաւորը «փղոսկրէ» անկողին մը ունէր. «Որ ննջէք ի գահոյս փղոսկրեայս, և փափկանայք յանկողինս ձեր...»։ Բացի իր անկողնէն, Դամասկոսի թագաւորը համակ փղոսկրէ գահ մը ունէր զոր Ատատ-Նիրարի Գ. պիտի յափշտակէր։

Աքաաբի ժամանակ փղոսկրը շատ հասարակ նիւթ մըն էր և կը գործածուէր շատ մը առարկաներու շինութեան, ինչպէս արդուզարդի տուփեր, կնիք, հայելիի կոթեր, գահեր, մահճակալներ և այլ կարասիներ զարդարելու, խաչաձև և ուղղաձիգ ձողեր շինելու, ինչպէս նաև ծածկելու համար պալատներու ներքին սրահներու պատերը։ «Հանգիստի տեղւոյն դրանդիները, բարաւորը և սեմը փղոսկրով ագուցի» կ'ըսէ Նաբուգոդոնոսոր։ Յայտնի է որ Աքաաբի փղոսկրով ծածկուած տունը նոյն կերպով զարդարուած էր։ Վերջերս, Հիւս. Սուրիոյ Արսլան Թաշին (Եփրատի ձախ ափունքը) պեղումներէն գտնուեցաւ ասորեստանեան արձանագրութիւն մը, որ ցանկ մըն է արքունի այն տուրքերուն՝ զորս Ատատ-Նարարի Գ. կը գանձէր Դամասկոսի թագաւորէն։ Նոյն ցանկին մէջ կ'երևան փղոսկրէ մահիճներ, տախտակներ և աթոռակներ, բոլորն ալ ծածկուած ոսկիի խաւով և ընդելուզուած թանկագին քարերով և կամ ուրիշ գունաւոր նիւթերով։ Սամարիոյ փղոսկրեայ գործուածներու արուեստը շատ աւելի նրբութեամբ կը ներկայանայ, ագուցման և գունաւորման տեսակէտով՝ քան Ասորեստանի արուեստը։ Յայտնի է որ Սամարիոյ արուեստը գտնուած է եգիպտականի ազդեցութեան տակ, որուն նշանաւոր նմոյշներ կը համարուին Հարպոքրատէս նստած անիարի (lotus) մը վրան, բազէի գլուխով Հորիւսը, Իսիսի և Նեփտիւսի թևաւոր գլուխներ, Ոսիրիսի դէմքը, մեհենագրութեանց խումբեր, փարաւոն՝ որ թշնամիները կը պատուհասէ, եգիպտական ոճով նստած թևաւոր սփինքսներ և առիւծներ, անիարի ծաղկանց շղթաներ։

Ու անհաւատալի չեն բոլոր այս ճոխ զարդարանքները. Սողոմոն թագաւոր ոսկիով դրուագուած փղոսկրեայ գահ մը ունէր. «Եւ արար արքայ (Սողոմոն) աթոռ փղոսկրեայ մեծ, և պատեաց զնա ոսկւով փորձով» (Գ. Թագ. Ժ. 18)։ Աքաաբ չա՜տ աւելի լայն դիւրութիւններ ունէր աւելի մեծ պերճանք մը տալու իր արքայական պալատին, փղոսկրի վաճառականութեան գլխաւոր կեդրոնը հանդիսացող Տիւրոսէն հայթայթելով պէտք եղած քանակութեամբ փղոսկր. «... և զմեհեանս քո շինեցին ի փղոսկրեից, ապարանս անտառախիտս ի կղզեաց Քետիմացւոց» (Եզեկիէլ ԻԷ. 6)։ Եւ դա՛րձեալ՝ «որդիք Հնդկացւոց վաճառականք քո յաճախեցին ի կղզեաց զվա-

digitised by A.R.A.R.@

ճառս քո ժանեօք փղոսկրեհւք...» (ա՛նդ, 15)։ Եւ արդարև փղոսկրը, նոյն դարուն, Յառաջաւոր Ասիոյ մէջ ամենէն շատ փնտռուած նիւթն էր։ Նեմրուտէն գտնուած գեղեցիկ փղոսկրները՝ որոնցմով զարդարուած էին պալատական արկղներ ու այլ կահեր, համեմատաբար գործն են նորագոյն դարու մը, թէեւ Էնքոմիէն գտնուեցաւ փղոսկրեայ տուփ մը որ գործն էր Թ. դարու (Ք. ա.)։ Այս տուփին վրայ յաջողապէս փորագրուած էին Սուրիացիներու և Փիւնիկեցիներու դէմքեր, ինչպէս նաև Աքաաբի դարուն յատուկ սայլ մը։ Աքաաբի նոյն այս պալատի բակին մէջ կատարուած պեղումներով երևան եկան փղոսկրեայ բզէզ (scarabée) մը, կանթ մը և առիւծի գլխու ձևով դաշոյնի յղկուած կոթ մը, բոլորն ալ փղոսկրէ։

Հարստութեան և պերճանքի նոյն այս դարուն, սովորութիւն էր նաև որ արքայական պալատը ձմրան յատուկ լաւ պատսպարուած և ամէն կողմը խնամով գոցուած սրահ մը և ամրան տաք եղանակին համար ալ օդասուն ուրիշ սրահ մը ունենար։ Մինչև հիմա տակաւին, Երուսաղէմի մեծ ապարանքներն ու պատրիարքարանները ամռան և ձմռան յատուկ բնակութեան սրահներ ունին։ Հին Կտակարանի մէջ, միայն Ամովսի մարգարէութիւնն է որ բնակութեան նման տրամադրութիւն մը կը յիշատակէ. «Եւ խորտակեցից զապարանս թեւաւորս ի վերայ ամառանոց ապարանիցն», ու այս՝ Յերոբովամ Բ.ի օրով։ Այս դրութիւնը, ինչպէս տեսանք, ո՛չ միայն յատուկ էր ու շատ ընդհանրացած՝ բովանդակ Պաղեստինի մէջ, այլ մինչև հեռաւոր Հիթիթ կայսրութեան սահմաններուն մէջ, մինչև Զէնճիրլի, ուր Պարրէքուպ հիթիթ թագաւորը կը պարծենայ վերը նկարագրուած ձևով բարեփոխած ըլլալուն իր հայրերուն ապարանքը։ Դիւրաւ կարելի է երևակայել ուրեմն որ Աքազիա, Աքաաբի որդին և յաջորդը, ամառ եղանակին զով օդի մէջ նստելու և քնանալու փափաքով, վար ինկաւ իր հովոցէն ու մեռաւ. «Եւ անկաւ Աքազիա (Ոքոզիա) ի վանդակապատէ վերնատանն իւրոյ որ ի Սամարիա և խօթացաւ» (Դ. Թագ.՝ Ա. 1)։

Յայտնի է Սաղմոսաց համարներէն որ, հաւանաբար Աքաաբ թագաւորի օրով, արքայական ճոխ կեանք մը կար Սամարիոյ մէջ։ Իր ոսկեհիւսակ կառքին մէջ նստող թագաւորը մեզի կը ներկայանայ իբր եռանդուն պաշտպանը արդարութեան ու իբր թշնամի մը անիրաւութեան։ Փղոսկրէ պալատին ու Տիւրոսի յիշատակութիւնը ո՛չ մէկ տարակոյս կը յայտնեն Աքաաբի փառաշուք անձնաւորութեան վրայ։ Իսրայէլացւոց ընկերային պերճ կեանքի մը յատուկ այս նկարագրութեան դէմ կան սակայն մռայլ պատկերներ ալ, մանաւանդ ժողովրդային հրաշապատում ա՛յն դրուագներուն մէջ՝ որոնք Եղիա մարգարէի գեղեցիկ անձը կը փառաւորեն։ Այսուհանդերձ, Սամարիոյ բլուրին վրայ նոյնիսկ տիրող ապահովութիւնը, քաղաքին մէջ տիրող հաճոյքի և գեղխութեան կեանքը, այն պերճանքը՝ որուն ծանրութիւնը ժողովուրդը ինքն էր որ կը կրէր, առանց յաջորդող զեղծումները՝ որոնք Յէուի օրով ա՛լ աւելի բազմացան, քաղաքական անկարգ դրութեան մը արդիւնք սասանութիւնները, ի վերջոյ և աստիճանաբար յանգեցան բուռն յարձակումներու։ Շատ յատկանշական է Յերոբովամ Բ.ի ժամանակակից Ամովս մարգարէի օրինակը։ Ինչպէս որ ինքն իսկ կը խոստովանի, Ամովս ո՛չ մարգարէ էր և ոչ ալ մարգարէի որդի. «Ես ո՛չ մարգարէ էի և ոչ որդի մարգարէի, այլ հովիւ էի և թութ քաղէի...» (Ամովս՝ Է. 11)։ Սա չկրնալով հանդուրժել իր ցեղին նորելուկ սովորութիւններուն, հոգին խռովեցաւ ու հրապարակաւ սկսաւ բամբասել Սամարիոյ կիներուն արբեցութիւնն ու յափշտակութիւնը, անհաւատներուն սպառնալով՝ թէ չարիքը պիտի չուշանայ. «Ամովսի միակ իղձն ու տեսիլքն էր վերադառնալ դէպի նախկին կենցաղը, այնպիսի կեանք մը ապրելով, որ յարմար ըլլար ազատախոհ մարդուն, հովիւներու ու հողագործներու կեանքը, մեծ քաղաքներու ժխորալի կեանքէն հեռու, առանց կանոնաւոր բանակի, առանց կեդրոնական կազմակերպ իշխանութեան, առանց արքունական պալատի և ո՛չ ալ իշխանական ազնուականութեան, առանց պերճանքի. և ո՛չ մի վաճառականութիւն, այլ պարզ ու համեստ պաշտամունք մը, առանց ձեռագործ տաճարի և խորանի, առանց քահանայական դասակարգի, այլ իբր հիմ այս

բոլորին մանկական պարզունակ իմաստութիւն մը և ասոնց բոլորովին ներհակ աստուածաբանութիւն մը»(1)։

Աքսորի իշխանութեան օրով Իսրայէլացւոց անտեսական կեանքը հիմնովին բարեփոխուեցաւ։ Իսրայէլի հողին գլխաւոր բերքերը սկսան հոսիլ Տիւրոսի շուկաներուն վրայ, ու այս ա՛յնպիսի ատեն մը՝ երբ Տիւրոս ընդարձակ վաճառականութեան մը տէրն էր։ Իսրայէլացիք Տիւրոս կը ղրկէին իրենց ցորենը, մեղրը, մեղրամոմը, ձէթը, բալասանը, ըստ Եզեկիէլի, որուն ցանկը պէտք է խոստովանիլ որ լման ցանկ մըն ալ չէ։ «Հրէաստան և որդիքն Իսրայէլի վաճառականք քո՝ ցորենով և խնկովք և կասեաւ և ընտիր ընտիր մեղու և իւղով և ռետնամբ լցին զաղխամաղխեայ վաճառաց քոց» (Եզ. 18)։

Եթէ մինչ այդ անծանօթ հարստութեան աղբիւր մը Իսրայէլի երկիրը մանէր և հիմնովին բարեփոխէր կեանքի պայմանները, անկարելի էր որ այս երեւոյթը իրեն հետ չբերէր կարգ մը շփոթութիւններ։ Արտածման դիւրութիւնները իսկոյն կը դատարկացնէին վաճառականները և թոյլ չէին տար այլեւս պահեստի նիւթեր ամբարելու։ Երաշտութեան պատճառաւ հունձքը կը տկարանար. «Եւ արգելի ի ձէնջ զանձրեւ՝ երիւք ամսովք յառաջ քան զկութս» (Ամովս՝ Դ. 7)։ Մարախն ալ քիչ չարիք չէ որ կը հասցունէր արտերուն. «... և ահա ծնունդ մարախոյ գայր ընդ առաւօտս, և ահա ջորեակ... և եղիցի եթէ վախճանեսցէ ուտել զխոտ երկրին» (անդ, Է. 1)։ Ու ո՛չ միայն արտերը կը վնասուէին, այլև այգիները, թզենիներու և ձիթենիներու պարտէզները. «... և յաճախեցէք ի պարտէզս ձեր եւ յայգիս և ի թզենիս ձեր և ի ձիթենիս, և եկեր թրթուր...» (անդ, Դ. 9)։ Ու ասոնց իբր հետեւանք սովը անդթօրէն կը ջարդէր այս ա՛յնքան արգաւանդ ու հարուստ երկիրը։ Ամովսի մէջ (Բ. 6) թերեւս քիչ մը չափազանցուած տողերով նկարագրուած են երաշտութեան հետեւանքով Իսրայէլի սովատանջ զաւակներուն սրտապատառ վիճակը, բայց պէտք է ընդունիլ որ ճշմարտութիւններ կան հոն. «... փոխանակ զի վաճառեցին զարդարն՝ արծաթոյ, և զտնանկն ընդ կօշկաց...»։ Ա՛յնքան արժէք չունէր մարդը Պաղեստինի մէջ՝ որ զոյգ մը կօշկի կը գնուէր, ու Տիւրոսցիք էին աւելի որ, «իբր գերիներու միակ հայթայթիչը բովանդակ աշխարհի մէջ», կը գնէին այդ խեղճ գերիները, գրեթէ ոչինչ գնով։ Ամովս խիստ կը մեղադրէ Տիւրոսցիները՝ որոնք հակառակ երկու երկիրները իրարու կապող դաշնագիրներուն, զանգուածով Եդովմացւոց ձեռքը կը յանձնէին հրեայ գերիներ։ Ու մարգարէին բողոքներէն որոշապէս յայտնի կ'ըլլայ՝ որ այդ դարու մարդոց շատերուն համար վաճառականութիւնը յափշտակութեան համազօր էր։ Ամովս այսպէս կը պատմէ Ասորեստանցիներուն և Եգիպտացիներուն (Գ. 9).

«Ժողովեցարուք ի լեառն Շամրնի (Սամարիա)
Եւ տեսէք սքանչելիս (աւար, անկարգութիւն) բազումս ի մէջ նորա.
Եւ զրկանութիւն ի մէջ նորա (պէ–աշշուր՝ փոխան պէ–աշտոտի)։
Եւ ոչ ծանեաւ զլինելոց եղեռն իւր,
Որ գանձէին անօրէնութիւն և թշուառութիւն...»։

Կիները՝ զորս Ամովս ժամանակի փաղաքուշ արտայայտութեամբ, «երինջք Բասանու, որ էք ի լերինս Շամրնի» (Սամարիա) կ'անուանէ, վերջինները չեն աղքատները զրկող ու տնանկը ստնահարող, «որ ասէիք ցտեարս ձեր՝ մատուցէք մեզ գինի զի արբցուք» (Ամովս՝ Դ. 2)։ Շահասիրութեան տենդը՝ որմէ վարակուած էին Իսրայէլացիք, անհամբերութեամբ զիրենք կը պարտադրէր նոյնիսկ տօները ընդմիջելու.

«Ե՞րբ անցցէ ամիսս՝ և շահեսցուք,
Եւ շաբաթս՝ և բացցուք զգանձս (այլուր՝ ցորենի մթերանոցներ)»։

Ամովսի գրքին կրօնական նկարագրէն տպաւորուած — մինչև իսկ կը խօսուէր մարգարէներու կողմէ հաստատուած կրօնքի մը մասին — մեկնաբաններ չճանչցան տնտեսական պատճառը ա՛յն նեղութեան որմէ կը տառապէր Իսրայէլ։ Ամովսի յիշած կշտամբական վերի տողերը շատ անգամ սխալներու առաջնորդած են Ս. Գրոց մեկնաբանները, այնպէս ենթադրել տալով որ Իսրայէլի երկրին վաճառականութիւնը

(1) Ernest Renan, Histoire du peuple d'Israël. Բ. հատոր, էջ 263։

digitised by A.R.A.R.@

օտար ձեռքերու մէջ կը գտնուէր այդ ատեն։ Ամովս հրեայ ընկերութեան գանազան դասակարգերու դժգոհման պատասխանատուն է հոգ, ա՛յն Հրեաներուն՝ որոնք երկրին տնտեսական ա՛յնքան արագ զարգացումէն չափազանց շլացած, ծայրայեղութիւններ ի գործ կը դնէին իրենց առուծախին մէջ, ահագին շահեր ապահովելով իրենց։ Բայց կը թուի որ Ամովս ընկերային այդ չարիքը լաւ չէր խորաքննած՝ որ զայն կը վերագրէր Տիւրոսցիներու հետ Հրէից կնքած առեւտրական համաձայնութեան. համաձայնութի՛ւն՝ որ Մելգարդի՝ Տիւրոսի Բահաղին, պաշտամունքին Սամարիա մուտքը կ'ամրացնէր։ Ընդդիմադիրներ սակայն միացան, չեզոքացնելու համար այս շատուածոյ պաշտամունքը։ Անոնք կարծեցին Յեհուի հետ համամիտ ըլլալ իրենց նպատակին ու որպէս զի Յեհու իր իշխանութիւնը զօրացնէ, ջարդեց Աքաաբի բոլոր սերունդը։ Յեհու թէեւ յաջողեցաւ Մելգարդի գեղեցիկ տաճարը քանդել, բայց չկրցաւ փոխել արդէն արմատացած սովորութիւնները եւ ո՛չ ալ չափաւորել առեւտրական գործունէութիւնը, որոնք անարգել շարունակուեցան մինչեւ Սամարիոյ կործանումը Ասորեստանցիներէն։

Կարեւորութենէ զերծ պիտի չըլլար անշուշտ ցոյց տալ սաանիկ փայլուն՝ բայց վտանգուկ քաղաքակրթութեան մը բեկորները, երեւան հանելով հետքերը առասպելական այն հարստութեան՝ որ պիտի չը փճանար առանց թշուառութիւններ յառաջացնելու եւ նաեւ առանց յարուցանելու հեռաւոր հետեւանքներու հակազդեցութիւն մը։

## Դ. — ԱՔԱԱԲԻ ՊԱԼԱՏԸ

Աքաաբ թագաւորի այս հոյակերտ պալատը երեք գլխաւոր մասերէ կը բաղկանար։ Առաջին մասը կը կազմէր բուն պալատը, որ հետզհետէ ընդարձակուեցաւ Ամրիի հին պալատին շուրջը։ Երկրորդ մասը պալատին ընդարձակ գաւիթն էր, որ արեւելքէն հարաւ ուղղութեամբ տարածուելով, կը յանգէր շրջապատի մը, որուն հակած էին բակին վրայ բացուող շարք մը փոքրիկ սենեակներ։ Վերջապէս պալատին երրորդ մասը կը կազմէր շրջապատէն դուրս ինկող եւ դէպի հարաւ-արեւելք բարձրացած ուղղանկիւնի մեծադիր աշտարակը։ Այս բոլորը հնախոյզ Պր. Ֆիշըրին յիշեցնել տուած է ասորեստանեան հին պալատները։ Ճիշդ պիտի չըլլար, սակայն, ենթադրել՝ որ Աքաաբի պալատին եւ ասորեստանեան պալատներուն մէջ նմանութիւններ կան, վասնզի աչքառու կերպով տարբեր է Սամարիոյ պալատի բակին դիրքը ասորեստանեան պալատներու բակի դիրքէն։ Ասորեստանի մէջ մեծ գաւիթը կը գտնուէր նոյնինքն պալատին ներսի կողմը, մինչդեռ հոս պալատին շատ մը ճակատները բակին վրայ կը նային։ Աքաաբի պալատին շէնքերուն ընդարձակութեան մասին գաղափար մը կազմելու համար աւելցնենք՝ որ պալատի շրջապատին արեւմտեան ճակատը, հիւսիսէն հարաւ երկարութեամբ 95 մեթր կը հաշուէր եւ թէ ուղղանկիւնի աշտարակը կը հաշուէր 12 . մ . 50, 16 մեթրի վրայ։ Ըստ Պր. Ֆիշըրի ենթադրութեան, այս աշտարակը կ'իշխէր պալատի մուտքերէն մէկուն։ Քաղաքին միակ դրան աշտարակն ալ նման էր պալատի աշտարակին։ Ինչպէս քաղաքի, այնպէս ալ պալատին միակ դուռ մը յատկացուած էր, որպէսզի կարելի ըլլար դիւրաւ խցել այն մուտքը՝ զոր հարկ պիտի ըլլար պաշտպանել։ Պալատի այս աշտարակին՝ ուր արքայական պահակագունդը կը բնակէր՝ տրուած անունը յայտնի է. ասիկա արքայական պալատին արմոնն էր, արմոն պէյթ համ-մելէք։ Պահակազօրքը ուրեմն դրուած էր պալատան մօտիկը, բայց դրսօք։ Յայտնապէս այս խելացի կարգադրութիւնը եղած էր, արգիլելու համար ներս մուտքը սպարապետներուն՝ որոնք շատ անգամ յարձակմամբ կ'սպաննէին թագաւորը, անոր տեղը անցնելու համար։ Այս արմոնին մէջ էր որ Փակէիա սպաննուեցաւ իր զօրաց հրամանատար Ռոմելայ (այլուր՝ Ռամաղեահու) որդի՝ Փակէէի կողմէ։ Արմոնին յատակագիծը վերջերս վերակազմուեցաւ. «Եւ դաւ մարեցաւ ի վերայ նորա (Փակէիա) Փակէէ որդի Ռոմելայ սպառազէն իւր, եւ եհար զնա ի Սամարիա առաջի տանն արքայի» (Դ. Թագ.՝ ԺԵ. 25)։

Թիրշայի արքայական նախկին պատը նմանապէս ունէր արմոն մը, որմէ կը յայտնուի որ անոր կառուցումը աւանդական դրոշմ մը կը պահէր իր մէջ։ — «...

digitised by A.R.A.R.@

և զհիմն աթոռոյն շինեաց ի տան Տեառն, և զմուտ թագաւորին զարտաքին դարձոյց ի տուն Տեառն յերեսաց արքային ասորեստանեայց» (Դ. Թագ.՝ ԺԶ. 18)։ Աշտարակը իր ներկայ իմաստին մէջ մեր գործածած «բերդ»ն (château) է և Հռովմայեցիներուն castellumը, իբր իշխանի կամ տանուտէրերու բնակարան և կամ պարզապէս հնօրեայ մեծ ապարանք։ Կ'աւանդուի որ Զիմրի տեսնելով որ Թիրշա Ամրիի թշնամիներուն ձեռքը պիտի իյնար, արքայական պալատին արմոնին մէջ ապաստանեցաւ, այսինքն առաջին պաշտպանութեան մէջ, իր ձեռքովը կրակի տուաւ զայն ու ողջ ողջ մեռաւ բոցերուն մէջ։ Այս հրդեհը հաւանաբար եղաւ մէկը այն պատճառներէն՝ որոնք երբ ասորեստանեան սպառնալիքը այնքան ճնշիչ կը դառնար՝ պարտաւորեցին Ամրին ուրիշ մայրաքաղաք մը ընտրելու։ Կրնայ ըլլալ որ ուղղանկիւնի այս աշտարակը, որուն շինութիւնը Աքաաբի կը վերագրուի, կառուցուած ըլլայ Ամրիի կողմէ. այլապէս Ամրիի սկզբնական արմոնը պէտք է փնտռել պալատի արևելեան բաժնին մէջ՝ որ տակաւին պեղուած չէ։ Պէտք չէ սակայն ուշադրութենէ վրիպեցնել՝ որ բոլոր այս մնացորդները ամբողջովին աւերուած են յետնագոյն փոփոխութիւններով և ի մասնաւորի այն շէնքերովը՝ զորս Հերովդէս բարձրացուց միևնոյն տեղւոյն վրայ, որով շատ դժուար եղաւ բո՛ւն իսկ Ամրիի եւ Աքաաբի զանազան շէնքերուն սկզբնական հետքերը գտնել։ Այսպէս, նախ և առաջ ճշդուեցաւ բուն իսկ արևմտեան պատը՝ որ իսկապէս Աքաաբի պալատին շէնքն էր։ Այս պատի և պալատի ընդհանուր շրջապատին միջև, և շրջապատին արևմտեան և հիւսիսային կողմը, կը տարածուի ընդարձակ գաւիթ մը՝ որուն վրայ կը նային պարիսպին կռթնած շէնքերը. ասոնք պալատական ախոռներն ու կառատուններն էին։ Նոյն այս գաւիթին հարաւային մասին մէջ բաւական մեծ շէնք մը շինուած էր, որ ըստ Րիզնըրի պէտք էր եղած ըլլալ ձէթ և գինի հանելու հնձանը։ Հոսկէ գտնուեցան ա՛յն խեցեգիրները (ostraca)՝ որոնք յիշատակութիւնը կ'ընեն հանուած ու ծախուած գինիի և ձէթի։ Այս շէնքը հաւանաբար կը ծառայէր նաև արքունի վերակացուներու իբր բնակարան։

Գաւիթին հիւսիսակողմը ի յայտ եկաւ ծեփուած աւազան մը, 105.23×55.20 մեծութեամբ, որուն ջուրը կը ծառայէր ձիերուն խմցնելու և կառքերը լուալու։ Ինչպէս որ տեսանք գրութեանս սկիզբը, այս աւազանը յիշուած է պատմական դէպքի մը առիթով։ Երբ Աքաաբ ծանրօրէն վիրաւորուեցաւ Ռամաթ-Գաղաադի յարձակման ընթացքին, կորսնցուց իր ամբողջ արիւնը և հոգին աւանդեց զինքը փոխադրող սայլին վրայ։ Աքաաբի դիակը Սամարիա բերին ուր թաղուեցաւ։ Մինչդեռ իր սայլը կը լուային Սամարիոյ աւազանին առջև, շուները լիզեցին անոր արիւնը ու պոռնիկներն ալ լոգցան արիւնոտ աւազանին մէջ (Գ. Թագ.՝ ԻԲ. 31–38)։

Աքաաբի մահէն յետոյ պալատը յաւելուածական կարգ մը մասեր ունեցաւ, որով ընդարձակուեցաւ դէպի արևմուտք։ Գլխաւորաբար շինուեցաւ բոլորշի աշտարակ մը, ներսէն մօտաւորապէս տասը մեթր տրամագիծով։ Այս նոր շէնքերը կը վերագրուին Յերոբովամ Բ.ի, որուն թագաւորութիւնը եղաւ նոյնքան փառաւոր։

Սամարիա ամրացեալ քաղաք մըն էր. դժբախտաբար սակայն անհետացած է Ամովսի յիշած հին պարիսպը. «. . . երկիրդ որ շուրջ զքև է (Սամարիա)՝ աւերեսցի, և խորտակեսցի ի քէն ամենայն զօրութիւն քո» (Գ. 11)։ Կը մնայ միայն հարաւային մէկ ծայրը։ Պարիսպին հիմերը շատ հետաքրքրական դիրքով մը շինուած են։ Ամերիկացի հետախոյզներ քաղաքին արևմտեան կողմը բացուող դրան տեղը գտան նախնական ամրոցին մնացորդ հետքերը։ Երբ սկսան այս տեղը պեղել, հողը լեցուն էր անձև բեկորներով, որոնք կը յայտնէին գոյութիւնը հսկայ դրան մը, այսօր բոլորովին քանդուած և որ իր աջ ու ձախ կողմերէն պաշտպանուած էր կոփածոյ գեղեցիկ քարերով հիւսուած երկու բոլորշի աշտարակներով։ Այժմ այս երկու աշտարակներուն միջև գտնուող քաղաքին մուտքը բոլորովին մաքրուած է։ Հին կտակարանը մէկ դուռ միայն կը յիշէ Սամարիոյ յատուկ և ասիկա ճիշտ է. վասնզի Սամարիա ամէն բանէ առաջ բերդաքաղաք մըն էր, և իբր այդ՝ քաղաքին դուռը պիտի դրուէր յարձակման մը պահուն թշնամիին համար ամենէն անմատչելի նկատուած մէկ կէտին

digitised by A.R.A.R.@

վրայ։ Նման յարձակում մը ճակատագրօրէն պէտք էր վարել քաղաքին արեւելեան կողմէն, ա՛յն կիրճէն՝ զոր Սամարիոյ պարիսպին սրածայր անկիւնը կը միացնէր մերձակայ բլուրներուն ու այս ձեւով դուռը որմածին արեւմտեան ծայրը դնելով, զայն գրաւել ուզող թշնամին կը պարտաւորէր պարիսպին ամբողջ երկարութեանը վրայ դիրք բռնել։ Ներկայիս, քաղաքին դուռը գրուած ըլլալ կը կարծուի բոլորշի երկու աշտարակներու միջեւ, և յայտնի կ'երեւայ որ այս աշտարակները վերակառուցուած էին յունական շրջանին շինուած քառակուսի երկու հին աշտարակներու տեղը։ Ասոնց տակը սակայն Պր. Ֆիշըր աւելի խորացուց իր պեղումները և գտաւ Իսրայէլեան աշտարակի մը քառակուսի յատակագիծը, որ անտարակոյս կը հասնի Ամրիի ժամանակին։ Ճիշդ պիտի ըլլար ըսել որ յունական շրջանի շինութիւն կարծուած բոլորշի երկու աշտարակներէն մին հռովմէական շրջանի գործ է։ Թէեւ կատարուած բոլոր պեղումները հիւսիսային միակ քառակուսի աշտարակի մը հետքերը երեւան հանեցին, բայց ոեւէ առարկութիւն չի վերցներ որ Իսրայէլեան քառակուսի երկրորդ աշտարակ մըն ալ գոյութիւն ունէր։ Հակառակ պարագային պէտք պիտի ըլլար պզտիկցընելու անոնց տարածութիւնը։ Այս վերջին պարագային անհրաժեշտ էր հաստատել սուրիական ամրոցներու մասնայատկութիւններէն մին, արդէն քիչ վերը յիշուած Աքաաբի պալատի նկարագրութեան առթիւ, որ էր պաշտպանութեան դրան առջեւ դրըուած միակ աշտարակի մը գործածութիւնը։ Ու ո՛չ միայն քաղաքներու դուռները, այլեւ պալատներու և նոյնիսկ տաճարներու շրջապատի դուռները միեւնոյն դիրքը ցոյց կուտային։ Ուշագրաւ է որ թէ՛ Աքաաբի պալատին և թէ քաղաքի դրան երկու աշտարակներն ալ միեւնոյն մեծութիւնը ունին, ինչպէս որ կը կարդանք Աբիմելեքի կողմէ Սիկիմի գրաւման առթիւ գրուած տողերուն մէջ. — «... Եւ լուան ամենայն արք աշտարակին Սիկիմացւոց, և եկին յամրոց տանն Բեթէլ Բերիթայ։ Եւ ազդ եղեւ Աբիմելեքայ՝ եթէ ժողովեցան ամենայն արք աշտարակին Սիկիմացւոց... Եւ մեռան ամենայն արք աշտարակին... և ելին ի տանիս աշտարակին» (Դատաւորք՝ Թ. 36–57)։ Այսպէս, քաղաքներուն բոլոր դուռները ամրացուած էին երկու համաչափ աշտարակներով, ինչպէս էր պարագան տաճարներու շրջապատի դուռներուն համար։ Այս ձեւ աշտարակաւոր դուռներու ծագումը բոլորովին սուրիական է և ճիշդ պիտի չըլլար ընդունիլ որ քրիստոնեայ սրբավայրերու մէջ միայն մէկ աշտարակի գոյութիւնը առնուած է Աղեքսանդրիոյ փարոսէն, ինչ որ կը յայտնէ զուտ տեղական և շատ հին աւանդութիւն մը։ Նոյնը կարելի է ըսել երկու աշտարակաւոր եկեղեցիներու համար, որ բոլորովին սուրիական աւանդութիւն մըն է և ո՛չ թէ անատոլեան։

Քաղաքի դրան առջեւ, բարձր հարթավայրի մը վրայ, կը գումարուի պատերազմական նշանաւոր խորհուրդը, ի ներկայութեան Աքաաբի և Յովսափատի որոնք կը կրեն իրենց արքայական պատմուճանները։ «Եւ ժողովեաց արքայն Իսրայէլի զամենայն մարգարէս իբրեւ արս չորեքհարիւր ...։ Եւ ամենայն մարգարէքն մարգարէանային նոյնպէս և ասէին. Ել յՌամաթ Գաղաադու, և յաջողեսցիս» (Գ. Թագ.՝ ԻԲ. 1-51)։ Այս ատեանին մէջ էր որ մարգարէներու հակասական խորհրդակցութիւններէն յետոյ, Իսրայէլի և Յուդայի զինակից թագաւորները որոշեցին յարձակիլ Ռամաթ Գաղաադի վրայ, զոր Սուրիոյ թագաւորը յանիրաւի յափշտակած էր։ Այս միեւնոյն հարթավայրին վրայ էր որ քաղաքին պազարը տեղի կ'ունենար և ուր շրջակայքի մարդիկ իրենց բերքերը ծախելու կուգային, գլխաւորաբար ցորեն ու գարի։ Հո՛ս ալ, ըստ արեւելեան սովորութեան, դատավարութիւն տեղի կ'ունենար, պատժելու դիտաւորութեամբ գողերն ու չարաչահները։

Ներկայիս, քաղաքի այս մուտքը ուղղակի կ'առաջնորդէ տաճարին տեղը՝ զոր Հերովդէս կանգնեց ի պատիւ Օգոստոս Կայսեր, ուրմէ քաղաքը իր անունը առաւ, Սեբաստիա, յունարէն թարգմանութեամբ։ Հերովդէսի կառուցած շէնքերը կ'ուղղուին դէպի արեւելք, մինչեւ այժմու Սեվաստիյէ գիւղին սահմանները։ Սեպտիմոս Սեւերոս փոփոխութեան ենթարկեց Հերովդէսի շէնքերը և Օգոստոսի տաճարը վերածեց պազիլիքայի։

Հալէպ ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
(Սիւրմէեան)

digitised by A.R.A.R.@

## ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

# ԽԱԼԴԵՐԷՆԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ (*)

Նախ քան հայերի գաղթը Հայաստան, այս երկիրը բնակուած էր մի առանձին ժողովրդով, որ կրում էր խալդի անունը։ Երկիրը մէկ պետութիւն չէր կազմում, այլ բաժանուած էր զանազան իշխանութեանց, որոնցից ամենամեծերն ու նշանաւորներն էին՝

1. Նաիրի, Վանայ ծովի հարաւային կողմը.

2. Բիայնա, Վանայ ծովի արեւելեան կողմը.

3. Ուրարտու, Վանայ ծովի հիւսիսային կողմը։

Այս ժողովրդի ծագումն ու նախնական պատմութիւնը բնաւ յայտնի չէ մեզ. պատմութեան մէջ առաջին անգամ երեւան է գալիս Ն. Ք. ԺԴ. դարում, ասորեստանցոց դէմ մղած պաշտպանողական պատերազմներով։

Ասորեստանցիք Միջագետքում կազմելով մի մեծ պետութիւն, ուզեցին նուաճել իրենց հիւսիսային հարեւաններին։ Առաջին թագաւորը՝ որ արշաւեց Նաիրիի վրայ Սալմանասար Ա.ն է (1330-1316), որ Տիգրիսի հովտով բարձրացաւ դէպի Տիգրանակերտի դաշտը։ Նրա որդին Թնգլաթ-Ադար Ա. (1310-1270) արշաւեց կորդուաց աշխարհը. բայց այս արշաւանքները թոյլ բաներ էին և յաջորդ թագաւորները՝ իրենց ներքին կռիւներով զբաղուած՝ ստիպուած էին մոռանալ Նաիրին։

Ասորեստանցոց պետութիւնը նորից զօրացաւ Թագլաթ-Պալասար Ա.ի ժամանակ (1108-1080), որ մի մեծ աշխարհակալ եղաւ, երեք անգամ արշաւեց Նաիրիի վրայ և հասաւ մինչև Վանայ ծովը, հարկատու դարձնելով այն կողմերի բազմաթիւ մանր իշխանները։

Սրանից յետոյ Ասորեստանի պետութիւնը նորից ընկաւ. նուաճուած ժողովուրդներից Բաբելացիք, Հաթերը, Հրեաները և Դամասկացիք ապստամբելով անկախութիւն ձեռք բերին. շարժուեց նաև Նաիրին, և թօթափելով հարկատուութեան լուծը՝ անկախ կառավարուեց մօտ 200 տարի։

Ասորեստանցոց թուլացած պետութիւնը նորոգելու ձեռնարկեց Թուգուլթի-Նինիպ Բ. (889-885), որ նորից արշաւեց դէպի Նաիրի։ Իր յաջորդները շարունակեցին իր գործը և նուաճեցին մինչև Միջերկրական ծովը։ Նուաճուած ժողովուրդների և Ասորեստանի միջև սկսուեց մի մեծ պատերազմ. արևմուտքի բոլոր ժողովուրդները միացան և մի հզօր դաշնակցութիւն կազմեցին Ասորեստանի դէմ։ Ասորեստանցոց թագաւորը 21 անգամ արշաւեց նրանց վրայ և այդ դաշնակցութիւնը խորտակեց։ Նոյնպիսի մի դաշնակցութիւն կազմեցին նաև Խալդիական ցեղերը, որոնց գլուխն անցաւ Ուրարտուի Արամէ թագաւորը (860). դաշնակցութեան կենտրոնը եղաւ Բիայնայի Տուսպա քաղաքը, որի բարձրաբերձ և անմատչելի ժայռերի վրայ հիմնուեց Վանայ բերդը։ Ուրարտեան թագաւորները նուաճեցին արևելքից մինչև Ուրմիոյ լիճը եւ Կասպից ծով, արևմուտքից մինչև Կիլիկիա և Ասորիք, հիւսիսից մտան Կուրի հովիտը, իսկ հարաւից սպառնում էին նոյն իսկ Նինուէին։ Այն բոլոր պետութիւնները՝ որ գտնւում էին Ասորիքի շրջանում, Հաթերը, Կումմուխ, Կարկեմիշ, Մալաթիա, Համաք, Դամասկոս, Սամարիա, Հրէաստան, Փիւնիկէ, Փղշտացիք, Տիւրոս, Մովաբի և Ամմոնի փոքր երկիրները և Մարաստան մտան Խալդիների դաշնակցութեան մէջ իբրև Վասալ երկիրներ։ Եւ այսպէս Խալդիան դարձաւ Արևելքի ամենամեծ պետութիւնը։

Շատ երկար տևեցին այն պատերազմները, որ մղեցին Ասորեստանցիք նուաճելու համար այս երկիրները և խորտակելու դաշնակցութիւնը։ Վերջապէս ընկաւ Կարկեմիշը և Հաթերի պետութիւնը կործանուեց (717). Նրանից քիչ յետոյ ջարդուեց Ուրարտուի թագաւորը Ռուսաս և Խալդերի դաշնակցութիւնը խորտակուեց (714)։ Դրանից յետոյ Խալդիան ընկաւ ու հասաւ

(*) Վերցուած՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Զ. Գլուխ):

digitised by A.R.A.R.@

երկրորդական պետութեանց շարքը· իրենց թագաւորները խոհեմութիւն համարեցին ամփոփուել իրենց սահմանների մէջ, երբեմն տարեկան նուէրներ ուղարկելով Ասորեստանեան թագաւորներին՝ հաշտ ու բարեկամ մնալ նրանց հետ և իրենց բովանդակ ուշադրութիւնը դարձնել Խալդիոյ ներքին բարօրութեան վրայ։ Այս վիճակը տեւեց մինչև Կիմմերների արշաւանքը որ եկաւ տակն ու վրայ անելու Ասիան։

Կիմմերները հնդեւրոպական մի ժողովուրդ էին, որ բնակւում էին հարաւային Ռուսաստանի տափաստաններում, Ազովի ծովի եզերքին։ Միջին Ասիայից, բարբարոսների մի նոր ցեղ որ կոչւում է Շակ կամ Սկիւթացի, ճանապարհ ընկաւ դէպի արեւմուտք։ Անցնելով Կասպից ծովի հիւսիսային տափարակներից, Սկիւթացի բարբարոսները փռուեցին մինչև Դոնի հովիտը։ Կիմմերները զարհուրելով նրանցից՝ փախան զանազան ուղղութեամբ (750)։ Մի մասը մտաւ Խրիմ, երկրորդ մասը՝ Թրակիայի եւ Վոսփորի վրայով, անցաւ Փոքր Ասիա, իսկ երրորդ և աւելի ստուար մասը մտաւ Կովկաս։ Կիմմերներին հետևեցին նաև Սկիւթացիք և լցուեցին Կուրի հովիտը, Ուրարտու՝ մինչև Մարաստան, Ասորեստան եւ Եգիպտոսի սահմանները։ Ամբողջ արևելքը նրանց ասպատակութեան և աւերումի ասպարէզ դարձաւ, բայց յատկապէս Խալդիան, որ Սկիւթացի եւ Կիմմեր բարբարոսների կենտրոնավայրն էր դարձել։ Քաղաքները կործանուեցին, ժողովուրդը ջարդուեց, գաղթեց, երկիրը աւերակ դարձաւ։

Այդ միջոցին Խալդիայի սահմանների վրայ երկու նոր ժողովուրդներ երևացին. արևելեան կողմում զօրացան Մարերը՝ որոնց թագաւորը Կիաքսար՝ նուաճեց Նինուէն, գրաւեց Ասորեստանցոց պետութիւնը (608), ջարդեց Սկիւթացիներին և արևելքից դուրս վտարելով՝ հիմնեց մի զօրաւոր պետութիւն։ Արեւմտեան կողմում ասպարէզ դուրս եկան Հայերը (Արմէնները), որոնք այն ժամանակ բնակւում էին Ալիսի հովիտը։ Ցնցուելով Կիմմերների և Փոքր Ասիոյ միւս ժողովուրդների շարժումից, նրանք անցան Եփրատը և մտան Արածանիի հովիտը։ Խալդիները ուժ չունէին դիմադրելու նորեկներին. Խալդիոյ արևելեան նահանգները իրենց մայրաքաղաքով միասին (Վան, Վասպուրական եւն.) անցան Մարաց իշխանութեան. Խալդիները հետըզհետէ ետ քաշուեցան դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւելք, ասպարէզը թողնելով արեւելքից Մարերին և արևմուտքից Հայերին։

Երկու դար տևեց Հայերի յառաջացումը. այս ժամանակամիջոցին նրանք կամաց կամաց մէկ կողմից բարձրանում էին դէպի հիւսիս և արևելք, միւս կողմից իջնում էին դէպի հարաւ։ Հիւսիսից հասան մինչև Կուրի հովիտը, իսկ հարաւից անցան Տորոսի լեռնաշղթան և հասան Տիգրիսի արևելեան ճիւղը՝ որ Հայաստանի սահմանն է։ Այս երկու դարի ընթացքում Հայերը աճեցին և զօրացան և այնպէս ձուլեցին բնիկներին իրենց մէջ, որ երկու դար յետոյ արդէն Խալդ ու Խալդիա չկար, այլ կազմուել էր մի ժողովուրդ և մի երկիր՝ Հայ ու Հայաստան։

Լեզուների պատմութեան մէջ նկատուած է, որ երբ մի օտար ցեղ տիրում է մի ուրիշ ժողովուրդի և միանում է նրա հետ, թէև իր լեզուն պարտադրում է նրան, բայց ինքն էլ փոխադարձաբար կրում է բնիկների լեզուի և քաղաքակրթութեան ազդեցութիւնը, բազմաթիւ բառեր փոխ են առնւում տիրողների լեզուի մէջ, բնիկների ոճաբանութիւնը թարգմանւում է նոր լեզուով, վերջապէս ամբողջ արտասանութեան եղանակը փոխւում է։

Այս ընդհանուր օրէնքից չէր կարող բացառութիւն կազմել նաև հայերէնը. անտարակոյս նա մեծապէս ենթարկուեց խալդերէն լեզուի ազդեցութեան և աւելի քան ուրիշ որևէ ազգից՝ կրեց խալդերէնի կնիքը, որովհետև հենց խալդիներն էին որ կազմեցին նոր հասարակութեան մի կարևոր մասը։ Ահա այս պատճառով հարկաւոր է մեզ ծանօթանալ նախ խալդերէն լեզուին ու գրականութեան։

Խալդիները գրութեան արուեստին ծանօթացան Ասորեստանցոց միջոցով։ Սարդուրի Ա. Բիայնայի թագաւորը (835—820) Ասորեստանից բերել տալով դպրապետներ, նրանց ձեռքով և Ասորեստանեան լեզուով քանդակել տուեց Վանում մի քանի արձանագրութիւններ, որոնց մէջ պատմում էր իր քաջագործութիւնները՝ Ասորեստանցոց թագաւորների օրինակով։ Նրա յաջորդը

digitised by A.R.A.R.@

Իսպուհինիս (820–800) հիմք դրաւ զուտ խալդեան ազգային գրականութեան։ Այդ օրուանից սկսած խալդեան թագաւորները թողել են մեզ հարիւրաւոր մեծ ու փոքր արձանագրութիւններ խալդերէն լեզուով, որոնց մեծագոյնն է Սարդուրի Բ.ի արձանագրութիւնը 400 տողով։ Իսկ հնագոյնը որքան էլ որ յոյս ունենանք գտնելու նորանոր, թեկուզ հազարաւոր արձանագրութիւններ, չպիտի անցնի Ն. Ք. 820 թիւը, քանի որ այդ ժամանակ արդէն ոչ թէ խալդերէն, այլ ասուրերէն էին գրում, ինչպէս ցոյց է տալիս Սարդուրի Ա.ի քարերը (Սայս, էջ 403)։

Այս արձանագրութիւնները գրուած են Ասորեստանեան բեւեռագիր գրութեամբ, բայց Ասորեստանեան բեւեռագրի գրութիւնը մի չափազանց բարդ ու դժուար բան էր։ Իր բազմաթիւ գաղափարանշանները, այբուբենի բազմաձայն արժէքը, միեւնոյն նշանագրի մերթ իբր գաղափարագիր և մերթ իբր առանձին տառ գործածութիւնը մինչեւ այսօր էլ կազմում են մի անլուծելի հանգոյց։ Խալդիները ըստ կարելւոյն պարզեցին այդ գրութիւնը, դժուարութիւնները ջնջեցին և դարձրին ըստ կարելւոյն տանելի մի վանկային գրութիւն։

Ահա այս գրութեամբ էլ գրուած են խալդեան արձանագրութիւնները։

Առաջին Եւրոպացի գիտունը, որ զբաղուեց այդ արձանագրութիւններով, Ֆրանսացի հայագէտ Սէն-Մարտէնն էր։ Մի առանձին յօդուածում՝ որ հրատարակուած է Ասիական ամսաթերթում (1823 թ.), քննելով Խորենացու նկարագրութիւնն Վանայ բերդի մասին, հետեւցրեց թէ Հայաստանում էլ պիտի գտնուին բեւեռագիր արձանագրութիւններ, և հրաւիրեց այս մասին գիտունների յատուկ ուշադրութիւնը։ Իր դրդմամբ, Ֆրանսիայի կառավարութեան կողմից մի ուսումնական՝ Շուլց գերմանացին, ուղարկուեց Հայաստան, 1826 թուին, տեղի վրայ պրպտումներ կատարելու և այդ արձանագրութիւնները երեւան հանելու։ Շուլցը 1828 թուին ուսումնասիրեց Վանն ու իր շրջականները, և իր կեանքի գնով երեւան հանեց բազմաթիւ բեւեռագիր արձանագրութիւններ։ Նա սպանուեց քրդերի ձեռքով 1829 թ., բայց իր օրինակութիւնները Ֆրանսիական կառավարութեան ջանքերով Եւրոպա տարուեցին և հրատարակուեցին Ասիական Հանդէսում (հտ. Թ., Ն., նո. 52) 1840 թուին։

Շուլցի գտած խալդերէն արձանագրութիւնները թւով 39 հատ էին, որոնց վրայ հետզհետէ աւելացան նորերը։ Զանազան գիտուններ սկսեցին փորձեր անել վերծանելու այդ արձանագրութիւնները։ Առաջին յաջող վերլուծումը կատարեց Հինքս անգլիացին 1847 թուին. նոյնը աւելի զարգացրեց Ստանիսլաս Գիւյառ (1880 թ.) եւ կատարելութեան հասցրեց Սէյս անգլիացին 1882 թուին։ Նա հրատարակեց մի ստուար աշխատութիւն Դի Քունեիֆորմ Ինսքրիփշընս օֆ Վան, ԺՌԱՍ 14, էջ 377–732 և հտ. 20, 1–48, որի մէջ նա տալիս է ոչ միայն Խալդիայի աշխարհագրութիւնը, պատմութիւնը եւ կրօնագիտութիւնը, այլ և խալդերէնի քերականութիւնը, խալդեան արձանագրութիւնները՝ իրենց ընթերցանութեամբ, թարգմանութեամբ և վերլուծմամբ, ինչպէս նաև խալդերէն լեզուի յատուկ և հասարակ անունների ամբողջական բառարանը։

Խալդեան բեւեռագրութեանց վերծանման այս գրութիւնն է որ այժմ ընդունուած է բոլոր գիտունների կողմից։ Այս գրութիւնը հետեւեալն է.

Որովհետեւ խալդեան տառաձեւերը (թէ՛ գաղափարանշաններ և թէ տառեր) բոլորովին նոյն են Ասուրականի հետ, ուստի կարդում են Ասորեստանցոց այբուբենով։ — Այստեղ կարելի էր առարկել թէ տառերի ձեւական նոյնութիւնը անհրաժեշտաբար չի ենթադրում նաև հնչման նոյնութիւն. օր. Ո նշանը թէեւ կայ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն միեւնոյն ձեւով, բայց հայերէնում կարդացւում է օ, ռուսերէնում պ, ֆրանսերէնում ն: Այսպէս էլ կարող էին խալդեան բեւեռագիր նշանները նոյն լինել ձեւով ասուրականի հետ, բայց հնչմամբ տարբեր։

Այս առարկութիւնը թէեւ արդարացի է, բայց հերքւում է այն իրողութեամբ, որ տեղերի և անձերի յատուկ անունները երկուսի մէջ էլ (թէ՛ ասորեստանեան և թէ խալդեան արձանագրութեանց մէջ) միեւնոյն ձեւով են գրուած. որանից հետեւում է թէ երկու լեզուի էլ տառերը միեւնոյն հնչումն ունէին։

Բայց միայն ընթերցանութիւնը բաւա-

digitised by A.R.A.R.@

կան չէր արձանագրութեանց միտքը հասկանալու համար. պէտք էր իմանալ նաև լեզուն և թարգմանել։ Դրան իբրև միջոց են ծառայում բազմաթիւ գաղափարանըշանները, և այն որոշիչ նշանները որոնք ցոյց են տալիս յաջորդ բառի արժէքը. ինչպէս՝ թէ նա մարդու թէ աստուածի, քաղաքի կամ թէ երկրի յատուկ անուն է, թէ նա շէնք է, և կամ քարէ՝ փայտէ մի առարկայի անուն է են։ Իսկ այն բառերը՝ որոնք մնում են այս շրջանից դուրս, բացատրւում են համաձայն իրենց գործածութեան տեղին, համեմատութեամբ այն բոլոր դէպքերի՝ որոնց մէջ նա գործածուած է և օգնութեամբ միւս բառերի։ Կարևոր է յիշել նաև այն յաջող հանգամանքը որ խալդեան բևեռագիր արձանագրութեանց ընդհանուր ոճը նոյն է ասորեստանեան արձանագրութեանց ոճի հետ և նախադասութիւնները ունին միևնոյն յօրինուածութիւնը. նախ թագաւորը յիշում է իր անունը և հայրանունը, տալիս է իր տիտղոսները, յետոյ պատմում է իր գործերը, յաճախ վերջում տալիս է անէծքներ՝ արձանագրութիւնը քանդել ուզողների հասցէին։

Գտնում ենք այստեղ մի օրինակ Սէյսից (էջ 448–9), որով գործնականապէս կարող ենք տեսնել արձանագրութեանց վերլուծման եղանակը։

Խալդեան արձանագրութեանց սիրելի ձևերից մէկը հետևեալն է.

Ustadi ⊢: (երկիր) Manaidi xaubi ⊢: (երկիր) Irkiuni xuadadi pari ⊢: (երկիր) Assur-nini ⊢: (երկիր) Algani 6421 ≡|–≡|ff (անձ) |<<< (եր) i adaki zazgubi adaki ⊣|⊣ (ողջ ողջ) |<<< (ներ) agubi 286 ≡≡ (անասուն) ⊢:≡=|| (ձի) |<<< (ներ) 2251 =|⊧ (եզ) paxini (եզ) |<<< (ներ) 8205 |≡|| (ոչխար) suse (ոչխար) |<<< (ներ)։

Եթէ այս հատուածի մէջ բաց անենք գաղափարանշանների իմաստը, կը գտնենք՝ . . . երկիրն Մաննա . . . երկիրն Իրկիունի . . . . . . երկիրն Ասորեստանի . . . երկիրն Ալգա(նի) 6421 մարդիկ . . . ան ողջք . . . 286 անասուն ձիեր 2251 եզ . . . . ներ 8205 ոչխար . . . ներ։

Այժմ սրա դէմ դնենք ասորեստանեան արձանագրութեանց հետևեալ հատուածը, որ նոյնպէս սրանց շատ սիրելի ձևերից մէկն է։

«Դաքարա երկրից ես մեկնեցայ. Բարա քաղաքին մօտեցայ. Բարա քաղաքը գրաւեցի. 320 նրանց զինուորներից սպանեցի. նրանց եզները, նրանց ոչխարները, նրանց ուարը քշեցի, քաղաքները հրով այրեցի»։

Ասորեստանեանց արձանագրութեանց մի սովորութիւն էլ այն է որ գաղափարանշանի կողքին յաճախ գրում է նրա ընթերցումը և կամ նրա արժէքի վերջին 1 կամ 2 վանկը. ճիշտ ինչպէս այսօր գրում ենք «2 (երկու) կամ Բ»։ Ըստ այսմ պախինի կամ ... պախինի որ գրուած է «եզ» գաղափարանշանի կողքին, նշանակում է «եզ», իսկ սուսե կամ ... սուսե, որ գըրուած է «ոչխար» գաղափարանշանի կողքին, նշանակում է «ոչխար»։ Ուրիշ դէպքերում, եթէ գտնենք պախինի և սուսի բառերը համապատասխան իմաստով առանձին գործածուած, առանց գաղափարանշանի և առանց որևէ նախավանկի յաւելման, նըշանակում է թէ այդ բառերը ամբողջական են և ոչ թէ ներկայացնում են միայն վերջին վանկերը։

«Ողջ» բառը մի քանի ուրիշ արձանագրութեանց մէջ գործածուելով համանման ձևով, գրուած է սակայն ոչ թէ գաղափարանշանով, այլ սեխերի ձևով։ Սրանից հետևում է թէ այդ գաղափարանշանները պէտք է կարդալ սեխերի, և կամ թէ սեխերի նշանակում է «ողջ»։

Այս նոյն գաղափարանշանը՝ որ վերջումն էլ ունի յոգնակի նշանը, վերաբերում է անշուշտ նախորդ «անձ» բառին, որ նոյնպէս յոգնակի է։ Այժմ նկատի առնենք ադակի բառը՝ որ կրկնուած է երկու անգամ և զազգուբի, ագուբի բառերը, որոնք հաւասարապէս վերջանում են բի: Բազմաթիւ արձանագրութեանց համեմատութիւնից երևում է որ այս վերջաւորութիւնը բայի եզակի առաջին դէմքի նշան է։ Այս բոլոր կէտերը միասին ի նկատի առնելով պիտի տեսնենք որ մեր առաջ ունինք ասորեստանեան սովորական մի դարձուածի խալդեան թարգմանութիւնը, այն է «մարդկանց մասամբ կոտորեցի, մասամբ ողջ ողջ բռնեցի»։

Այժմ եթէ նկատենք որ ուրիշ արձանագրութեանց մէջ պարու արմատը նըշանակում է «չարժուիլ», խաուբի (եզ. ա. դէմքի վերջաւորութեամբ) նշանակում է

digitised by A.R.A.R.@

բազմաթիւ դէպքերում «նուաճեցի», — դի ներգոյականի վերջաւորութիւնն է և ուստաբի (եզ. ա. դէմքի վերջաւորութեամբ) նշանակում է «մօտեցայ», — կարող կը լինենք վերի հատուածը թարգմանել այսպէս.

«Մօտենալով երկիրն Մաննայի, նուաճեցի երկիրն Իրկիուն. դուրս եկայ երկրից Աստրեսաանի, երկրից Ալգանի, 6421 անձ մասամբ կոտորեցի, մասամբ ողջ ողջ գերեցի, 286 ձի, 2251 եզ և 8205 ոչխար»։

Հատուածից դուրս են գալիս նաև քերականական մի քանի կանոններ. այսպէս 1) նի ցոյց է տալիս բնութեան խնդիր, 2) «մարդ» բառի յոգնակին վերջանում է ի, 3) «եւ» շաղկապը յաճախ չի գործածւում խալդերէնում։

Ահա այսպէս են վերլուծուել խալդեան բևեռագիր արձանագրութիւնները, որոնց ամբողջական հաւաքածոն հրատարակւում է այժմ Գերմանիայում. — Կորպուս ենսկրիպցիօնում խալդիկարում, Լէման Հաուպտի ձեռքով։

Բևեռագրերի վերծանութեան այս ընթացքը պատմութեան համար կարելի է բաւարար կոչել. բայց լեզուաբանութեան համար շատ պակասաւոր է։ Պատմաբանը որ ուզում է իմանալ դէպքերը, ճանաչել թագաւորների անունը, որոշել նրանց ժամանակագրութիւնը, գտնել տիրապետութեան սահմանը, դուրս բերել քաղաքների, գաւառների ու նահանգների անունները են, մօտաւորապէս հասնում է իր փափագին։ Բայց լեզուաբանը՝ որ պէտք ունի բառական ընդարձակ բառապաշարի, քերականական կանոնների, հոլովման ու խոնարհման ըստ կարելւոյն ամբողջական պատկերին, չի գտնում դրանք։ Օրինակ թուականները՝ որոնք լեզուի ամենաբնորոշ բառերի շարքն են կազմում, անծանօթ են, որովհետև գաղափարանշանով են գրուած։

Շատ կարևոր էր որոշել թէ խալդերէնը լեզուաբանական ո՛ր ճիւղին է պատկանում։ Առհասարակ ընդունուած է որ խալդերէնը հայերէնի հետ կապ չունի և նոյնիսկ հնդեւրոպական ճիւղին էլ չի պատկանում։ Գերմանացի Մորթման գիտնականի փորձերը հայերէնով լուծելու այդ բևեռագրերը, անյաջող անցան։

Մի մանրամասն քննութեան մէջ հրատ. Գերմ. գիտ. ամսաթերթում հտ. 26, էջ 465 և շար. 1872 թուին, այս ուսումնականը ուզեց հաստատել թէ խալդերէնը հայերէն է։ Ինչպէս բոլոր գիտունները, նոյնպէս և Մորթման խալդեան արձանագրութիւնները կարդում էր ասուրական այբուբենով, բայց որովհետև ինքը բաւական հմուտ չէր ասուրական այբուբենի գրութեան, շատ տեղ նշանները սխալ էր կարդում, երբեմն էլ գաղափարանշանները իբր տառ կարդում։ Ընդունելով որ խալդերէնը հայերէն պիտի լինի, իր այդ սխալ ընթերցանութեամբ ստացած բառերը Մորթման համեմատում էր արդի հայերէն բառերի հետ և իմաստներ հանում։ Հիւբշման հայագէտը ԶԴ 23 (1877) էջ 46–48 ցոյց տուաւ որ համեմատութեան եզրերը ճիշտ չեն. ձայնական համապատասխանութիւնները իրար չեն բռնում. այն ձայնական օրէնքները՝ որոնք ըստ Մորթմանի վերլուծման կարելի է դուրս բերել խալդերէնի համար, հայերէնի օրէնքները չեն. Քրիստոսից մի քանի դար առաջուայ մի լեզուն չի կարող նոյն լինել այսօրուայ վիճակի հետ և նոյն իսկ եթէ խալդերէնը հայերէնը լինէր, շատ տարբեր պիտի լինէր արդի հայերէնից. Մորթմանի երևան հանած հայերէնը հայերէնի ո՛չ մի շրջանին չի համապատասխանում։ Միևնոյն ժամանակ Սէյս անգլիացին ցոյց տուաւ թէ Մորթմանը ասորեստանեան լեզու չգիտէ և տառանշանները սխալ է կարդում (տես իր յօդուածը ԶԴ 23 (1877, էջ 407–9)։ Մորթման ինքն էլ էր ստիպուած խոստովանելու թէ իր վերծանութեամբ ոչ մի քերականական օրէնքի չի հասնում և թէ միևնոյն բառի հոլովումը կամ խոնարհումը իրարից շարունակ տարբեր են։ Ուրիշ խօսքով չկայ քերականութիւն։ Բայց առանց քերականութեան էլ լեզու չկայ։

Մորթմանի ընթերցանութեան և վերլուծման սխալ լինելուն իբրև գերագոյն ապացոյց բաւական է յիշել այն ծիծաղելի հանգամանքը, որ Մորթման Սարդուրի Ա.ի արձանագրութիւնն էլ՝ որ գրուած է Ասորեստանեան լեզուով, խալդերէն կարդաց և իբր հայերէն վերլուծեց (Սէյս, անդ. էջ 383)։

Այսպէս ուրեմն Մորթմանի փորձը բոլորովին ձախողուած էր։

digitised by A.R.A.R.@

# ԴԻԻԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԱՅ

## ԽԲ

(Յակոբ Դ. կաթողիկոս Ջուղայեցի Կ. Պոլսէն առ Եղիազար կաթողիկոս ի Հալէպ) (*):

*Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն հայոց, եւ պատրիարգ Վաղարշապատու յուսակոս եւ քրիստոսանկար, երկնահանգէտ եւ ոգինասարսս, սրովբէապատ եւ քրովբէաճեմ սրբոյ աթոռոյ էջմիածնի։ Ցոյմէ ժամանեաց հասցէ աւանդն տէրունի, նշանն պանծալի տեառն Յիսուսի՝ միարար եւ շաղկապողական ի տարուստ եւ ի բացատ միջոցէ. հանդերձ աստուածային շրութեամբն՝ առ խնկապէս սիրեցեալ եւ հոգեւոր եղբայրդ իմ Եղիազար կաթողիկոսդ, ցնծալ քեզ յարաժամ օրիորդացեալ մանկամբք Սիոնի ի խնամս Տեառն Յիսուսի յաւէտապատում բերկրանօք՝ ի ցնծութիւն մեզ եւ ի պարծանս համայնից ի Քրիստոս հաւատացելոց։ Շնորհք սկզբնալոյս պատճառին Հօր, եւ սէր համատիպ պատկերի Որդւոյն, եւ գթութիւն գոյակցի ամենասուրբ Հոգւոյն անսպառախաղաց մշտահոս ծաւալեսցի ի վերայ քո. եւ ըստ արեգակնային բազմանշոյլ առ քեզ բազմասցի, եւ ընդ քեզ կայացեալ ունակասցի յարաձգական յաւիտենիւ եւ յարագոյ ժամանակաւ ամէն։*

*Եւ ընդ սիրալրական եւ ողջունական նամակիս՝ գիտութիւն լիցի խոհեմութեանդ, զի ըստ ընտրութեան գրոց սրբոց եւ ըստ մարգարէութեան յառաջարկութեանց մտաց իմաստնոցն՝ գովելի է նոր նկատումն իրի փոխճանականի, յորոց մանաւանդ Սողոմոնին է մեզ յատկապէս առնլի՝ թէ Իմաստութիւն յելս ճանապարհաց գովլի. զնոյն առեալ մեր մտածութեամբ յաղագս կատարօնական պատճառին այնորիկ, ի տեղի իջման Միածնի Որդւոյն Աստուծոյ. կալեալ զձեռանէ միմեանց՝ եղաք ուխտս եւ կնեցաք դաշինս, որպէս զի եղիցի այս օգուտ մերայնոցս ամենայնի, ներկայիցս եւ ապագայիցն եկեղեց նպաստակ։ Եւ զայսոսիկ պարտ էր մեզ անջրելի պահել հաստատութեամբ, ըստ Դաւթի վկայութեան. Ուխտս դիք եւ կատարեցէք, եւ դարձեալ ըստ Սողոմոնի. Զինչ եւ ուխտիցես դու Աստուծոյ, մի՛ յամիցես հատուցանել զնա, որչափ եւ ուխտիցես հատո՛, զի լաւ է քեզ չուխտել քան ուխտել եւ ոչ հատուցանել։ Եւ զի հարկ էր քեզ սիրելւոյդ զնոյն ուխտ եւ դաշինք ըզմտաւ ածել միշտ եւ պահել ի նոյնութեան, որպէս եւ եսն ունէի ծրարեալ պահեստի ի մերում մարմնեղէն սնդկի։ Քանզի յայնմ օրէ մինչ չեւ ձեռնամուխ լինելն քո յայդմ գործս՝ անարատ ունէի զսէր ուխտադրութեանն, զի վկայն իմ յերկինս է եւ իրաւադէտն ի բարձունս, ըստ Յոբայ։ Իսկ յայս երիս ամս զինչ անցք անցին, այն ամենայն ոչ ըստ կանոնաց էր, եւ ոչ կենարարին պատուիրան, այլ սոդոմանաց էր գործ։ Զի զտակ կործանեան եւ աւիթն ամենայն չարեաց բազմահնար մեքենայիւք մարտ եղեալ ոգորէր առ սուրբ տեղին եւ առ յանդամս Քրիստոսի, զի ըստ իւրոյ բաղձանացն յանկ հանցէ որպէս եւ է իւրն գործ սովորական։ Բայց գոհութիւն եւ փառք Քրիստոսի Փրկչին մերոյ, զի լուաւ պաղատանաց ծառայից իւրոց, եւ յամօթ արար զբանսարկու պիղծն, եւ զիւր վաղալար յորոգայթն մանրեալ փշրեաց, եւ ըստ կամաց իւրոց զիւրն խաղաղութիւն տնօրինեալ հաստատեաց, թէ՛ այսր եւ թէ այդր. այսուհետեւ մի՛ եւս աշխատ արասցես զիմս ծերութիւն։ Դարձեալ ծանիր, սիրելի՛, զի մեք յաւուր երկուշաբթին որ զկնի Պայծառակերպութեանն՝ միջնորդութեամբ Սարգիս վարդապետին պատրիարգի եւ հայցուածօք քահանայից եւ ժողովրդոց՝ արարաք խա-*

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է. «Յակոբ կաթողիկոսի սիրոյ գիր առ Եղիազար կաթողիկոս»։

---

*Վերջին ժամանակներս Սանտալճեան հրապարակ հանեց իր մի նոր տեսութիւնը, որով խալդերէնը դառնում է հայերէն լեզուի մի նախաւոր ձեւը եւ խալդիներն ու հայերը իբրեւ ազգ էլ նոյնանում են։*

*Այս փորձն էլ սակայն անյաջող անցաւ։*

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Շարունակելի)

digitised by A.R.A.R.@

զաղութիւն եւ հաշտութիւն. ապա եւ զկնի քանի աւուրց անցելոյ, ի յաւուրս Փոխման տօնի բարեկենդանի Սուրբ Աստուածածնին, եկն ուրախարար թուղթ Մարտիրոս վարդապետին, յորում գրեալ էր զխաղաղութենէ ձերմէ։ Եւ եղեւ կրկին ուրախութիւն եւ ցնծութիւն բոլոր ժողովրդեան, որով ամենեքեան հանգստացեալք Աստուծով զփառատրականն երգէին նուագ, որ երարձ զխռովութիւն եւ հաստատեաց զխաղաղութիւն։ Եւ եւս խմա՛, սիրելի, սիրելւոյն Տեառն զխօսս. Եթէ սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն՝ համարձակութիւն ունիմք եւն։ Նաեւ սուրբ հայրն Եւագր գրէ. Նի՛ստ դատաւոր քոյոյ սրտիդ յատենի դատել եւ քննել։ Զի թէ ճշմարտապէս քննիցեմք, չունիմք պատասխանի Աստուծոյ. զի Տէրն մեր հրամայէ. Տեսեալ զգործս ձեր բարիս՝ փառաւորեսցին զՀայր։ Իսկ մեք ցուցաք զգործս զայթակղելիս եւ օրինակ չար յետակայից. ըստ Պօղոսի՝ Են մեղք որ զկնի երթան ի դատաստան։ Մինթէ մեք անմա՞հ եմք որ ոչ մտածեմք զհաշիւն զոր պահանջելոցն ի մէնջ, ըստ մարգարէին. Ո՜ հովիւք դատապարտք, որք եղէք զայթակղութիւն զխտանոցին։ Զիջցո՛ւք, ո՛վ սիրելի, զիջցո՛ւք, զի կարասցուք տալ պատասխանի այնմ որ մինչ ի յետին բնիանն պահանջէ։ Եւ արդ ըստ խնդրոյ Մարտիրոս վարդապետին եւ ըստ բաղձանաց ժողովրդեանն, անկեալ կայծ բանի մարմնեղէն առապարի յայտնապէս ծրեցի։ Իսկ եթէ ըստ մարդկային բարուց մտածիցեմք՝ պատճառելով զմիմեանս, միայն սկզբնաչարին աշխարհակէզ հուրն անշիջելի ի մէջ ողորմելի եւ տառապեալ հայազուն զարմի, եւ լինի բազում չարեաց առիթ եւ անմեղ հոգւոց կորուստ, ներկայիս եւ ապագայից զկնի եկելոց, եւ մեք մնամք դատապարտ եւ անպատասխանի առաջի անաչառ դատաւորին՝ զբազմացն պատիժ կրելով անձամբ։ Ապա թէ զիջանիս ի հրամանս մեր եւ ի կոչ ժողովրդեանս՝ կատարելով զՔրիստոսի հրաման, ոչ սակաւ վնասակար իրաց հերքումն լինի եւ յոլով բարեաց սկիզբն եւ յիշատակ բարի զկնի մեր եւ ուղիղ պողոտայ զհետ եկելոցն։ Եւ զի թէպէտ այժմ խնդայ հոգին չարութեան ընդ յառաջումն իւրն գործառնութեան, որով կայ տրտմեալ Հոգին սուրբ, զոր հրամայէ սրբազանն ոչ տրտմեցուցանել, եւ ընդ լինել խաղաղութեան եւ հաշտութեան, յայնժամ մնայ գլխակոր եւ յամօթալից լեալ արտահալած ի քրիստոնականն սահմանէ՝ թշնամին արդարութեան, եւ առ այս ուրախացեալ ցնծայ Հոգին սուրբ։ Աստի եւ հաւատամ յԱստուած՝ զանց առնել մերովք գործեցելովք, պարգեւելով շնորհս առատս առ ի բժշկութիւն նմին վիրաց ըստ գրոյն. Ուրանօր լինելութիւն առաւելութեան մեղացն՝ անդանօր եւ յաճախումն շնորհաց. այս այսպէս եւ վասն այնորիկ։ Բայց է եւ այլինչ բազում խորհուրդ եւ բան, զոր ի սիրակերտ եւ ի ցանկալի տեսութեան ցուցցուք հաստատելով զպայմանն Քրիստոսի, որ է նոյնինքն խաղաղութիւն եւ սէր. ըստ այնմ՝ թէ Աստուած սէր է եւ որ կայ ի սէր նորա՝ մնայ յաւիտեանս յաւիտենից։ Ողջ լեր քոյովք ամենեքումբք ի խնամս Տեառն Յիսուսի յարազուարճ բերկրանօք։ Գրեցաւ ի թվին ՌՃԺԶ (= 1667) յամսեանն սեպտեմբերի իդ. ի մայրաքաղաքն Ստամպօլ ի դուռն Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն։

Այլ արդ ի վերայ այնց գրեցելոց գերազանցապէս ընտրելի եղեւ երկոքեանս այսոքիկ տեղի, այսինքն՝ կամ ի Կոստանդնուպօլիս եւ կամ ի Զմիւռին պատահիլ միմեանց առ այս գործ։ Որոց պատճառ է վասն առաջնոյն ըստ հանդիսադրութեան տեղւոյն եւ ըստ հաստատութեան դաշնադրութեան, եւ վասն երկրորդին՝ ըստ նոյն դիտաւորութեան առնլի կլիրս, եւ յաւէտ առ ի բժշկութիւն որտից արանցն Արեւելից։ Վերստին անդրէն հաստատեալ կացցեն ի նոյնութեան, որում ըղձան սիրտք մեր լինել այսպէս, եւ համայնից իսկ յամենայնի։ Իսկ դու յօժարեալ ըստ իմ ուղղեցես զմիտս քո առաւել ի տեղիս յայսոսիկ հաստատութեամբ։ Եւ հաւատամ յԱստուած զի շահ եւ օգտութիւն լինի մեծ յոյժ։

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

digitised by A.R.A.R.@

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Այստեղ կը դնենք պատճէնները քանի մը հեռագիրներու՝ փոխանակուած Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Կաթողիկոսական Ընտրութեան Պատուիրակ՝ Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Իսրայէլեանի միջեւ:

*Երեւան, 29 Ապրիլ 1941*

*Ողջոյններ Երեւանէն. հասած եմ 14-ին. Պէնօն՝ 25-ին, տեղեկացուցէք տիկին Պէնօնին:*

*ԿԻՒՐԵՂ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ*

*Թէհրան, 23 Մայիս 1941*

*Կը մեկնիմ Սպահան. պիտի ղրկեմ տեղեկագիրը Կաթողիկոսական Ընտրութեան յետաձգման մասին. պիտի տեղեկացնեմ մեկնումս. ողջոյններ:*

*ԿԻՒՐԵՂ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ*

*Երուսաղէմ, 23 Յունիս 1941*

*Փութացէք վերադառնալ Երուսաղէմ Իրաքի ճամբով. դիմում եղած է Իրաքի կառավարութեան ստանալու համար Ձեր* transit *վիզան:*

*ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔ*

*Սպահան, 26 Յունիս 1941*

*Շնորհակալութիւններ հեռագրին համար. կը պատրաստուիմ մեկնելու:*

*ԿԻՒՐԵՂ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ*

---

### ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

✱ 28 *Մայիս Դշ.— Յետ միջօրէի ժամը 3ին, վարդապետաց և դաս. աշակերտաց մէկ մասը, գլխաւորութեամբ փոխ-լուսարարապետ Տ. Գէորգ Վրդ.ի, Ջիթենեաց լեռը բարձրացան Համբարձման նախատօնակը իր պատմական վայրին վրայ կատարելու համար։ Քաղաքական այս տագնապալից կացութեան հետեւանքով, կառավարութիւնը հրահանգած էր երեք գլխաւոր միաբանութեանց պետերուն, մինչեւ լուսամուտի ժամը լմնցուցած ըլլալ իրենց կրօնական արարողութիւնները։ Ուստի ժամը 8.30ին Միաբանութիւնը վանք վերադարձաւ, կատարելէ վերջ հսկումն և գիշերային ու առաւօտեան ժամերգութեանց պաշտամունքը։*

✱ 29 *Մայիս Եշ.—* Համբարձում. *առաւօտեան ժամը 7.ին ամբողջ Միաբանութիւնը, ինքնաշարժերու պաշտօնական գնացքով, Համբարձման սարը բարձրացաւ, ուր յետ Հրաշափառի արարողութեան՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ կատարուած, Ս. Պատարագ մատուցուեցաւ սրբավայրի շրջափակին մեր բաժինին մէջ։ Պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Արտաւազդ Արք., բնաբան առնելով Գործք Առաքելոցի խօսքը՝ «Եւ եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ... և մինչև ի ծագս երկրի»։ Ներկայացնելէ վերջ Յիսուսի ապրած կեանքը իր առաքեալներուն եւ մտերիմներուն հետ, մանաւանդ ըրաւ սա պարագան թէ, Համբարձման լերան վրա՛յ միայն «մինչև ի ծագս երկրի» շրջելու հորիզոնը բացուեցաւ առաքեալներու աչքին։ Անկէ՝ սկսաւ քրիստոնէութեան համաշխարհային տարածումը։ Ու չեշտեց մեր՝ հայերուս գործը ի Քրիստոս, քարոզութեամբը երկու առաքեալներուն, որոնց գործը շարունակած ենք ազգովին, վկաները ըլլալով քրիստոնէութեան։*

✱ 1 *Յունիս Կիր.—* Երկրորդ Ծաղկազարդ. *Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Քարոզեց Տ. Շնորհք Վրդ. բացատրելով իմաստը այսօրուան կիրակիի Երկրորդ Ծաղկազարդ կոչումին։ Ու ներկայացնելէ վերջ հայկական աւանդութիւնը՝ այս տօնին առիթով Ս. Գր. Լուսաւորչի կեանքին մէկ դրուագը եղող, յորդորեց հաւատացեալները կազմելու իրենց մէջ համբերութեան առաքինութիւնը, մանաւանդ պատերազմի, անձկութեան ու տագնապի այս օրերուն, երբ փորձութիւնները բազմապատիկ են։*

✱ 8 *Յունիս Կիր.—* Հոգեգալուստ. *Երէկ, յետ միջօրէին, ամբողջ Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ Ս. Փրկչի վանքը գնաց, ուր Հրաշափառի հանդիսաւոր արարողութենէն վերջ կատարուեցաւ Հոգեգալստի նախատօնակը։*

*— Այսօր, առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ։ Պատարագեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և քարոզեց՝ ներկայացնելով Ս. Հոգիին դերը և ներգործիչ զօրութիւնը Եկեղեցւոյ հաստատութեան, կազմակերպութեան և զարգացման ու ծաւալման մէջ, դարերու ընթացքին։*

✱ 15 *Յունիս Կիր.—* Սկիզբն Յարութեան Կիւրակէից եւ յիշատակ Եղիայի մարգարէին. *Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Գէորգ Վրդ. «Խոստովան եղերուք միմեանց զմեղս» բնաբանով։ Մատնանշեց որ իւրաքանչիւր անհատի պարտականութիւնն է օգնել իրար, աղօթել իրարու համար. վասնզի մարդը մեղանչական է։ Ապա ներկայացուց Եղիա մարգարէն իբրև հաւատարիմ պաշտօնեայ Աստուծոյ. խրոխտ, անողոք՝ անարդարութեանց հանդէպ։*

✱ 16 *Յունիս Բշ.—* Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց. *Նախատօնակը կատարուած էր երէկ, յետ երեկոյեան ժամերգութեան, Ս. Հրեշտակապետաց վանուց եկեղեցիին մէջ, հանդիսապետութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։*

*Այսօր, առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ անդ, և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հռիփսիմէի մատուռին սեղանին վրայ։*

✱ 21 *Յունիս Շբ.—* Ս. Գրիգոր Լուսաւորչի ելն ի վիրապէն. *Նախորդ երեկոյին կատարուած էր նախատօնակը, այսօր ևս՝ հանդիսաւոր պաշտա-*

digitised by A.R.A.R.@

մունքէն վերջ, գիշերային ժամերգութիւնը։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Ստեփանոս աւանդատան մէջ կանգնուած երեք խորաններէն Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով կանգնուածին վրայ։

* 22 Յունիս Կիր. — Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի. Հանդիսաւորապէս պաշտուեցաւ գիշերային ժամերգութիւնը, նաև անդաստանը, Ս. Յակոբայ մայր տաճարին մէջ, և աւագ խորանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագը։ Քարոզեց Տ. Արթուն Վրդ. (Տե՛ս «Սիոն»ի ներկայ թիւը, էջ 131)։

* 29 Յունիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Հայկական Գողգոթայի մեր վերնատան մէջ։ Քարոզեց Տ. Նորայր Վրդ. «Թօշակն մեղաց մահ է» բնաբանով։ Ցոյց տուաւ թէ արդի մարդկութիւնը՝ զօրաւորն ու տկարը, մտնելով սատանայի ծառայութեան մէջ, կը ստանայ իր թօշակը, որ մահն է՝ սպանութիւնները սա օրերուն։ Յուսադրեց ժողովուրդը ապագայի երջանիկ տարիներով, խորհելով որ մարդկութիւնը աւելի զգաստ պիտի ըլլայ տագնապի այս շրջանին անցումէն վերջ։

## ՄԱՐԶԱՀԱՆԴԷՍ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

14 Յունիս 1941ին, Շաբաթ օր, տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի մանչերու Տարեկան Դաշտահանդէսը, Ժառանգաւորաց Վարժարանի խաղավայրին վրայ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ի ներկայութեան Միաբանութեան և որոշ թիւով բազմութեան։

Դպրոցի մարզական կեանքը, այս տարի ևս, կանոնաւոր ընթացք մը է ունեցեր, շնորհիւ՝ երեք երիտասարդ պարոններու՝ Վահէ Ղազարեանի և երկու օժանդակներու՝ Յակոբ Ստեփանեանի և Գէորգ Հայրապետեանի յօժարակամ անձնուիրութեան։

Վարժարանի աշակերտութիւնը բաժնուեր է չորս խումբերու (Ասպետ, Կորիւն, Ազատ և Մասիս)։ Նախորդ շաբաթներուն, կատարուեր են արդէն Պասկէթ-պօլի, Ֆութ-պօլի և Շուէտական մարզանքներու մրցումները։ Այսօր, տեղի ունեցաւ միայն ողիմպիական բաժինը՝ մարզիկներու եւ հանդիսատեսներու տողանցքով, 50-800 մեթր վազքերով, երկար ու բարձր ոստումներով, գնդաձգութեամբ, դրօշարշաւով, պարանաձգութեամբ, Շուէտական մարզանքի քանի մը փորձերով և փոքրիկներու զուարճախաղերով։ Հետաքրքրական էին նաև Վարժարանիս Գայլիկներու խաղերը՝ իրենց ցոյցերով, երգերով եւ զանազան կենդանիներու (այծ, շուն, կով, խոզ, աքաղաղ և այլն) ձայներու նմանեցումով։ Խըմբական խաղերու մէջ առաջին հանդիսացողները ստացան նոյն խաղերուն յատկացուած բաժակները և վահանները. իսկ մարզիկներէն ողիմպիականի մէջ առաջին և երկրորդ հանդիսացողները՝ մետալներ, երրորդները՝ ժապաւէն։ Ուշագրաւ էր նոյնպէս ընդհանուր ոգևորութիւնը մանուկ ու պարմանի այս մարզիկներուն մէջ, որոնք ցոյց տուին ճկունութեան, յարատևութեան, աշխոյժի և կարգապահութեան ոգի։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

* 2 Յունիս Բշ. — Այսօր, Ս. Աթոռոյս Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր մը ուղղեց Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Ս. Արքեպս. Նարոյեանի՝ անոր անուան տօնին առթիւ։

* 12 Յունիս Եշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով առժամեայ դիւանապետ Հոգ. Տ. Սերովբէ Վարդապետը, ներկայ գտնուեցաւ տեղւոյս Անգլիքան Մայր Եկեղեցւոյ մէջ Մեծն Բրիտանիոյ Ճորճ Ե. Վեհ. Թագաւորին ծննդեան տարեդարձին առթիւ կատարուած գոհաբանական պաշտամունքին։ Նորին Ամենապատուութիւնը, եպիսկոպոսական զգեստաւորմամբ խորան բարձրացաւ, և բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Թագաւորին, Թագուհւոյն և Կայսերական Տան բոլոր անդամոց արևշատութեան և բարօրութեան համար։ Գոհաբանական մաղթանքի աւարտումէն յետոյ Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Անգլիքան Եպիսկոպոսարանին մէջ կատարուած շնորհաւորական ընդունելութեանց։

— Նոյն օրը, Նորին Ամենապատուութիւնը Հոգ. Տ. Սերովբէ Վարդապետին հետ այցելեց Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Վսեմ. Մր. Քիյթ-Ռօչի ապարանքը, և այս առթիւ շնորհաւորեց Նորին Վսեմութիւնը։

* 20 Յունիս Ուր. — Եուկօսլաւիոյ Երուսաղէմի Նոր Ընդհ. Հիւպատոսը իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

* 24 Յունիս Գշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր հետ ունենալով Միաբանութեանս Գերապատիւ հիւրը՝ Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեանը, այցելութիւն մը տուաւ Հայֆայի եւ շրջակայից մէջ բնակող (մասնաւորաբար Նազարէթ ապաստանած) հայ գաղութին։

* 30 Յունիս Բշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը վանք վերադարձաւ Նազարէթէն։

— Պատերազմական այս տագնապի օրերուն, Հայֆայի գաղութէն բաւական թիւով հայ ընտանիքներ Երուսաղէմ փոխադրուեցան, կեանքի ապահովութեան համար։ Անոնք մեծ մասամբ ապաստանութիւն գտան վանքէն ներս (թէ՛ Երուսաղէմի և թէ Բեթղեհէմի մէջ), ուր, տրամադրելի բոլոր պարապ սենեակներն ու խուցերը յատկացուեցան իրենց բնակութեան համար։ Կը յուսանք թէ աշխարհ շուտով պիտի գտնէ իր խաղաղութիւնը, որպէսզի «պզտիկ սա տարագրութեան» ելած ընտանիքները դառնան իրենց լքուած տուները, և վերագտնեն իրենց կեանքին բնականոն ընթացքը։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Torkom Manoukian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@